Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

281.64
G-63q

√

W 483

उर

829

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԺԽ-Ա/Ռ

396-42

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

ԳՐԻԳՈՐԻ ՍԿԵՒՌԱՑԻՈՅ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ

ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

100
8518

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԳ – 1854

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԱՐՍ

ՄԵԾԻ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏԻՆ

ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԵՍԻ

ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՏԱՐՍՈՆԻ ԿԻԼԻԿԵՑՒՈՑ

Ի ԽՆԴՐՈՑ ՆՈՐԻՆ ՀԱՄԱՆՈՒՆ

ԵՒ ՀԱՄԱՁԳՒՈՑ

ՆԵՐՍԵՍԻ ՓԱՀԱՆԱՑԻ

Ա. ԲԱԶՈՒՄ զգուշութեան և սակայ արթնութեան պէտք են այնոցիկ՝ որ սատուածայնոց և սրբազանից արանց ձեռնարկեն գրուատ գովեսաի՝ խոհական մտաց և զօրեղ բանի, այլ և վարուց մաքրագունից, որպէս զի մի պայծառապոյն վարուցն փայլումն 'ի նսեմ և աղջամուղջ աղքատամտաց մտացն ընդ առեստութեան գրուանաւ ծածկեսցի, և աղաւաղեալ առաքինութեանցն քաջատոհմութիւն 'ի կշիռ զօրութեան անիմաստ յայտից չափեսցի։ Քանզի և ոչ յայտասիկ ապրշութեամբ ձեռնարկողացն և յոլովիւք 'ի հատանել գերակատարն անկեալ 'ի վայր խմաստից վարուց առատականի արձակել գիտեմ անպատիժ։ Իսկ յամենեցունց յայտ ցանէ թափուր եղելոյ յընտրոգա-

կանան տեսեալ և որ ընդդէմն իմա-
նի գերալիր և պատարուն , որոց
ոչ յուսացի կրկից պատժական 'ի
ժպիրն ձեռնարկութեաց փոքու
զմեծամեծն կշռել։ Ըստ որում և
իմ յարդիս խուսափեալ ձեռնար-
կութեանց , վեհիս այսորիկ և եր-
ջանիկ քահանայապետին գրուա-
տից , երկեւղիւ մեծաւ պակնում,
գուցէ յարժանեացն վրիպելով
մեծանձնութեան սորին գովեսի ,
իրաւապէս պատժողականն մատ-
նիմ ատենի իբր զզլացող մեծին փա-
ռաց , արձանացուցանելով 'ի քար-
տիսի զվիպասանութիւնս՝ այնպագայ-
ին տալով կարծիս բաղձական՝
անպարագիր լինել առաքինու-
թեանցն անչափութեան ։

Եւ արդ զինչ լռեցի և ոչ ճառե-
ցի զարեգակնային արփւոյն համա-
սփիւռ ճառագայթիցն փայլումն
լռութեանն ամպով ծածկելով , ոչ
և յայսոսիկ դատապարտութեան
լուծեալ տարակոյս բնականապէս
գիտելով հարկաւորութեամբ առ
'ի մէնջ պահանջել սրբոյն . զի թէ-

պէտ և 'ի մոերմաց և ջերմագունից նախ քան զմեզ առ այս ձեռնարկեալ, մեզ ոչ առ 'ի զնոցայն ապօտացուցանել, այլ և զմերս բանական երախայրի քահանայապետին մեծի Նուիրել. ըստ որում և հարկ ազգուն 'ի յոլովից փանաքեաց և փարթամաց 'ի միոյ մեծութեան պատիւ հաւաքի, այլ թէ և վերջին ըստ ամենակի, այլ ոչ ըստ յօժարութեանն և սիրոյ բաղձանաց թուի։

Սակայն ոչ առ այս գուզնաքեայ երկեւղ պաշարէ, ըստ անձեռնարկելի մերս փոքրկութեան բանի զնորայն գիտելով բան գովեսի, այլ ոչ փոքր ինչ յայտնիկ նպաստաւորութիւնն և պատկառելի յարացոյց կայ առաջի. զի թէ յանեղ և յանխմանալի և ամենայն բնութեան բանի անձեռնարկելի, ոչ միայն ընդ նիւթոյս կապելոց և բիւրակերպ մարմնական ախտիւք վատանգելոց, այլ և վեհիցն մաքրոց, և առ ամենաբարին հպաւորութեան բարեաց եղելոց տիրապէս բանականացն ան-

իմանալի և անճառ աստուածայ-
ինն, սակայն 'ի մաքրոց և յաս-
տուածամերձ արանցն ըստ առաքի-
նութեանն մասանց հպելոց յո-
լովք խօսեցան ըստ չափոյ զօրու-
թեան՝ ոչինչ պատահեալ դատա-
պարտութեան, թէ և յոյժ 'ի վերջ
յօժարութենէն գոան. զի և յայ-
տոսիկ ոչ թէ որ ոչ ըստ արժա-
նեացն չափէ՝ պատժի, այլ որ ոչն
ախորժէ, դատապարտի։ Ապա ու-
րեմն խօսեցուք 'ի պատմելն յայտ-
նելով, թէ չեմ բաւական. զի 'ի
չափ այսորիկ ժամանել, թերեւս
նմա միայնոյ, որ յօժարապէս իմա-
ցաւ տեսանել Յաստուածայինն և
գերբարձունն։ Նաեւ յոլովս յաս-
տուածայնոց արանց խօսեցաւ վարս
և հանդէսս քաջութեան, և զինչ
է նա 'ի միջի և ոչ իբրեւ զնա, և այս
նիւթ յանդգնութեան թերեւս
լինի։

Եւ արդ ուսո՛ւ սկսցուք, և կամ
յորոց ներբողեսցուք. որք արտա-
քին հանդիսիցն են վիպասանք՝ 'ի
մարմնոց և որք նորա են՝ զնիւթ առ-

նուն գովասանութեան, այսինքն 'ի
քաջատոհմութենէ զարմի, 'ի թա-
գաւորդ գահից, յիշխանական պա-
տուոց, 'ի յաղթութենէ պատե-
րազմաց, 'ի զարմանակերտ շինուա-
ծոց, 'ի դատողական առեղից, 'ի
յղփութենէ ստացուածոց, 'ի զօ-
րութենէ մարմնոյ, 'ի բարեբախտու-
թենէ հասակի, 'ի դեղեցկամանու-
թենէ անդամոց. քանզի յայսոսիկ
քաջահաճոյ՝ բարեբաստիկք, և ոչ
նոյնպիսիքն՝ եղկելիք անուանին։
Իսկ որ 'ի նեղքուսա զբարեմասնու-
թեանն սովորեցին նկարագրել ըզ-
դեղ, այլ ինն ընդդիմակօք զքաջա-
հաճութիւնն ստորագրեն. ըստ
այնմ՝ թէ Ամենայն փառք գտեր
թագաւորի 'ի նեղքոյ։ Վասն որոյ
եթէ էր ախորժելի ըստ մարմնոյ
զսա պանծացուցանել, յոլովս առ-
այս և ընդարձակ նիւթ բարերչան-
կութեան առձեռնպատրաստ 'ի շի-
նուած յարմարութեան գովեստի
էր գտանել։ Բայց զինքդ, որ զա-
մենայն միանգամայն զփառս և զմե-
ծութիւնս տեսաւորիս արհամար-

հեաց, և զհեշտութիւնս և զպատիւս
որ 'ի սմանէ կղկղանս համարեցաւ,
և որ այսորիկն է ներսակ՝ հետեւե-
ցաւ, 'ի սմանէ ոք զնորայն առցէ
պատճառ գրուատի, զոր ոչ միայն
արհամարհեաց, և իբրեւ զաւելորդ
և անպիտան և խափան լաւագունին
յառաջատուութեան 'ի բաց ըն-
կէց. այլ և 'ի վերայ բարձրագահ
գիտանոցի առաքինութեան ելեալ,
ամենեցուն համանգամայն ոքք 'ի
մարմնի զառ 'ի սմանէ հրատարա-
կեաց անուոի պատրանս, և ուսոյց 'ի
բաց դառնալ. և որ ստուգագոյնն
է և անլուծական՝ նմա հետեւել:
Այլ զի մի անծանօթ 'ի քննողաց՝
սորա զարմ լիցի և տեղի, օն ա-
ռեալ խուն ինչ յիշատակեացուք.
այնքան՝ որպէս զի մի ինչ տարա-
դէպ և անպատկան վերընձիւղումն
առ 'ի բարիս սմա կարծեսցի, նախ-
նեացն ընտրելոց և ծնողաց բարե-
պաշտից գոլով շառաւեղ:

Էր սա ըստ զարմի տանց նախա-
ւարացն Հայոց Թագաւորազանց,
գահու մեծի և պատուոյ ընդ առա-

ջինան հանդիպեալ՝ի հեռուստ ան-
ոի. և՝ի նուազելոսան թագաւո-
րութեանն, և՝ի զօրանալ աղախնա-
ծին սեռին, եկեալ առ սահմանօքն
Հռոմոց՝ բռնանային՝ի գահ Կիւ-
լիկիոյ զՏաւրոսիւ յանմատոյցն գը-
ղեակ Լամբրոն, և որ շուրջ զնո-
վաւ գղեակք և գաւառք. յոլով
ձիրս պարգեւաց և պատիւս իշխա-
նութեան յինքնակալացն Յունաց
ընկալեալ, և որդի՝ի հօրէ զիշխա-
նութիւնն յաջորդեալ մինչեւ՝ի
հայր սրբոյս, որում անուն կոչի
Աւշին։ Իսկ բարեպաշտուհի մայր
սորա գոլով Արշակունի՝ի ցեղէ
սրբոյն Գրիգորի Լուսաւորչին,
դուստր գոլով վեհին զօրավարի
Եղբօր վերագիտողացն Հայոց՝ սրբոց
հարազատացն Գրիգորի և Ներսե-
սի, և քոյր մեւսոյն հեղինակի որում
Գրիգորիսն յորջորջի։ Այլ զայսո-
սիկ թողլով յառաջիկայսն ճեպեսց-
ուք։ Քանզի սեռ գիտեմ սրբոցն՝
զառաքինութիւն, դաւառ՝ զվերինն
Երուսաղէմ, թագաւորութիւն՝
զերկնիցն արքայութիւն. իշխանու-

թիւն՝ զանազան սատրապաստել. յաղ-
թութիւն՝ գիւաց և նոցին արկա-
ծից. զարմանահրաշ շինուածն՝ որ
'ի հաւատոյ և 'ի յուսոյ և 'ի սիրոյ
ձեռակերտի, գաստոզական աթոռ՝
զընտանին ինքեան, առեան՝ զընտ-
րութիւն խոհականին որով աջեացն
ընդ ահեկացն լինի բացորոշութիւն.
Ճոխութիւն՝ զոր յերկինս գանձեն
անդժրելի ՃՃեաց և գողոց, զօրու-
թիւն՝ որով զթշնամին կենաց ընկ-
ներիկն. բարեշավութիւն հաստակի՝
զժամանելն յայր կատարեալ'ի չափ
հասակի կատարմանն Քրիստոսի.
գեղեցկամանութիւն՝ զպատկերա-
նալն 'ի կերպարան սկզբնատպին
յոր և հաստատեցան: Ասասի յի-
սուսի զ'ի բացընկեցիկն և կոխան 'ի
նմանէ եղեալ թողլով, որում՝ տեն-
չացաւն և զոր ստացաւն՝ առնուլ 'ի
գովեստ:

Բ. Քանզի ուխտական սա յորդ-
վայնէ, ըստ որում՝ և Սամուէլն
այն 'ի յարդանդէ. նուէր տուողին՝
մինչեւ ցօր մահուան խոստացեալ:

Խակ յորժամ՝ ծնանէր՝ զգէղեցկու-
թիւն գիմացն տեսեալ ուխտա-
դրուժք լինէին գաշանցն. Զայս
վայելուչ գէղ, ասէին, ոչ է պարտ
հանել՝ի վայելչութեանց աշխարհի,
այլ կացցէ մնասցէ՝ի ժառանգու-
թիւն հայրենեաց՝ իշխանութեան.
և թէ տէր տացէ այլ մանուկ՝ տա-
ցուք փոխանակ սորա։ Զայսոսիկ
խորհելով, խակոյն գժնդակ լինէ
ախտ պատահէր, մինչ զի նուազ
լինէ ընդհատ՝ի փչմանէ լինել շն-
չոյն։ Խակ բարեպաշտուհի մօր նո-
րա՝ի բաց զամենայն թոզեալ հնարս
բժշկական արհեստից, մեծաւ յու-
սով և բաղում հաւատով՝ի տա-
ճարն ընթանայր Տիրամօրն, ուր և
ուխտադրութեանն էին գաշինք,
անձամբ զանձն դատապարտէր,
յանցաւոր զինքն խոստովանէր։ Ցե-
րեսս անկեալ մաղթէր, արտասուօք
Աստուածն թանայր. գարձեալ ուխ-
տէր, կրկին գաշինս հաստատէր
նմա և Մխածնի նորա տալով զնա
նուէր մինչեւ յօր մահուան իւրոյ,
և քահանայ անդրէն՝ի խանձարրոց

առնէր. և ահա հնչանայր վերսին մանուկն, 'ի դժոխոցն դարձեալ դրանց. և հրաշափառ իմն իր կատարիւր, զի սանդ ուխտին ինքնիշխան լինէր կամաց համոզիչ, և դեր քան որ ուխտեաց՝ նուիրեալն զայն տիրացոյց։

Գ. Վաղվաղակի ընդ ահեկին և աջոյ զգացումն, աստուածային պարապէր ուսմանց, 'ի տունջեան և 'ի գիշերի անդանդաղ 'ի նոյն կանխէր, կորովակի այնոցիկ և քաջահմուտ ըստ տուչութեան լինէր հոգւոյն։ Փոխան զբօսանաց տհան հասակի՝ աստուածայինն օրինաց լինէր քննութիւն. ընդ սահանցն դիւելոց, զի Պաւղոսէն 'ի Փրիսոս աղաչոյն ջամբեալ դիւէր զկաթն. և նովին յարբուն անձնականին հաստանէր շափոյ. նախ քան զկատարումն, սեսաւորին իմանալեաւն յառաջանայր։ Սիրալի ամենեցուն. մանկական տիոյն երեւէր յառաջադիմութիւն. մինչ զի 'ի մոր եդեալ բազմաց, Զի՞նչ կամի լինել մա-

նուկս, ասէին, զի ոչ զբօսամբ ընդ հասակակիցսն, այլ ընդ կատարեալսն խրատու փարէր, զամենքեալ խորտիկս ենթադրեալ՝ պատշաճագունիւքն շատանայր. 'ի փաղփուն զգեստուց հրաժարեալ, խոշորագունիւքն հեշտանայր. ընդ աստուածային խօսելով օրէնս՝ զընդունայնաբանութիւնս 'ի բաց վարէր. խոկալով միշտ 'ի վերինս՝ զանց ատրնայնովքս առնէր. և 'ի խուն ժամանակի, 'ի յոլովս աստուածային վարժիցն չափ հասանէր. մեծութիւն և փառք երկրաւորիս սարդիոսայն կորովակի բբացն երեւէր:

Դ. Քանզի երբեմն ըստ օրինի քաջազարմից՝ առ ինքնակալն Յունաց ածեալ լինէր. իսկ նա զսովորականն այնորիկ 'ի կիր առեալ բան և իր՝ իբր ընդ տղայոյ՝ ընդ աստուածախրատ համբակն խօսէր, յիշխանութիւնս հասուցանել պատուով խոստանայր, և ձիրս շնորհի առաջի դնէր. Մանուկ դու, ասէր, ընդ իս և առաջի իմ քո է-

լով, գերագոյն ամենայն փառաւո-
րաց պալատանս զոր տեսանիս, ըղ-
քեզ կացուցից։ Իսկ շնորհալից մա-
նուկն հեզաբար առ նա բարբա-
ռեալ. Ով թագաւոր, ասէր, եթէ
էր յաւէտանալ 'ի մարմնի և յաշ-
խարհի անլուծական զսորայս հեշ-
տութեան բերեալ վայելս անակն-
կալն այլուամ աշխարհի, և կենաց
լինել փոխագրութեան. բարեոք 'ի
քէն խրատու անասի, և մեծաւ
շնորհակալութեամբ պարգեւացդ
և պատուոյ հաւանիմ. իսկ իմ ա-
հա յաստուածայնոց խրատեալ օրի-
նաց, կորստական և ցնդելի գոլ
զերկրաւորս ամենայն մեծութիւն և
փառս, խոտ զմարմին յայտնեալ, և
ծաղիկ որ 'ի նմա վայելչք, որ ընդ
առաւօտս ծաղկեալ զուարճանայ,
և խորշակահար յերեկս լինի. ցա-
մաքի խոտն և թօթափի ծաղիկն և
կորնչի գեղեցկութիւնն։ Նա և ոչ
իսկ վայելուչ և հեշտալի զսա լինել.
այլ ի ցաւոք և տրտմութեամբ և
բաղում տառապանօք, որ 'ի կար-
ծեալ փառաւորութեանն ի ցեն.

խակ ուսայ և այլ աշխարհ անլուծա-
կան և կայուն որ միշտ նոյնպէս ու-
նի առանց ցաւոց և հեծութեան,
և որ ինչ ներհակ իմանի, և թագա-
ւորութիւն այլ որ յաւիտենական
է, մեծութիւն և պատիւ, որ ոչ
անցանէ։ Եւ այսոքիկ 'ի ձէնջ կար-
ծեալքս հակառակ գոլով նմին,
այնմ աշխարհի բաղձամ լինել ժա-
ռանգաւոր և նորին թագաւորի զի-
նուոր. մեծութեան և փառացն
այնմիկ ցանկացեալ եմ, որ զաղքա-
տութիւնն և զանփառութիւնն ընդ-
դիմանին ոչ ունի. առացուածոց այն-
պիսեաց տենչամ, որ 'ի ներհակաց
ոչ դժրի. կեանս զայն ողջունեմ
որ ախտից անընդունակ է. զպար-
գեւս քո հայցողացն տուր, և զպա-
տիւ որ նորին են ցանկացողք. քան-
զի ես միանգամ յայն վիճակեցայ
'ի զինուորութիւն. և զամենայն որ
նորին ստացման խափան և արգել
լինին՝ իբրեւ զվնասակար և զանպի-
տանս 'ի բաց ընկենուցեմ։ Զայս լը-
ւեալ ալեքսին և որ ընդ նմա խորհրդ-
դականքն, սքանչացան հիացմամբ

մեծաւ ընդ հանճարեղ պատասխանին և գովեցին զիմաստութիւնն և յաճախութիւն հիացմանն, 'ի յանկատարն հատակի զգերակատարն լուր առնէին։ Եւ այսպէս հոգեւորական շահիւք օգտեալ 'ի նմանէ, դառնայր անդէն 'ի տեղի իւր։ Դէպ եղեւ յայլում ժամու առ որ մեծին Անանիոքայ էր իշխող՝ ածիլ. և նովին օրինակաւ հարցեալ, զնոյն լսէին իմաստութեամբ պատասխանի, և առաւել քան զնոյն. ընդ որ 'ի սքանչումն կրթեալ՝ զսոհեմութիւնն գովէին։

Ե. Իսկ յառաջադիմութիւն վարուցն ոչ թողացուցանէր 'ի նմին, այլ աստուածային շնորհն 'ի քահանայականն վերակոչէր պատիւ և 'ի պաշտօն փրկական և մեծ խորհրդոյն, զոր ընկալեալ ոչ խբրեւ զպատիւ ինչ վարկուցեալ, այլ յանձնառութիւն լծոյ ծանրագունի։ Եւ այնուհետեւ սկզբնաւորէր, խբր այն ինչ ձեռնարկեալ՝ զարքայութեանն նեղ և նուրբ ճանապարհին

մաձոյ 'ի վարուցն առաջատուԹիւն. և տայր զանձն յերկս մշակուԹեան աստուածային գրոց վարժից, յար ընԹեռնլով և սաէպ քննելով. և ուր տեղեկանայր զիմաստուն և հանճարեղ ուսուցչաց 'ի մերձակայս և հեռաւորս՝ վաղվաղակի անդր հասանէր, զօրէն անսարաԹեաւ և խմաստուն Թռչնոյ 'ի վերայ Թռչելով մարդաց հին և նոր կատարանաց, զանուշահոտուԹիւն աստուածային իմաստից և զքաղցրուԹիւն նորին ճաշակաց բանի յիւրն հաւաքելով խոհական 'ի մտաց բձիձս, տայր յուրախուԹիւն Թագաւորաց և ռամկաց և 'ի բժշկուԹիւն ախտացեալոց ըստ գրեցելումն, և 'ի յոլովս յայտնիկ գեղեցման ժամանակս 'ի կատար ամենայն հասանէր իմաստից։

Զ. Եւ զինչ ասա. որ զամենայն գիտէ նախ քան զլինելն, և անգոյքն նմա են յայտնիք. որ և յառաջահոգակ նախախնամուԹեամբն զբնաւ անօրինէ և բերէ որ-

պէս կամի, զառ յինքենէ 'ի բա-
ցուստ սկզբնաւորեալն 'ի գլուխ ա-
ծէ, յառաջ կոչէ յայցելութեան
պատիւ, ոչ թողու զՀրագն ընդ
գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանա-
կի գիտողութեան գնէ. զի ամենե-
քին որ 'ի տան եկեղեցւոյ իցեն՝ ըղ-
ղոյս գիտութեանն տեսցեն։ Եւ
ձեռնադրեալ լինի յաթոռ մեծի
մայրաքաղաքին Տարսոնոյ Կիւղիկե-
ցւոց. մանաւանդ եթէ անօթոյն
իսկ ընտրութեան յաջորդ. զի և
ոչ տարադէպ է ասել, նորին իսկ ա-
ռաքելական մատակարարութեանն
ընդհի զբացայայտողն իւրոց խոր և
անհուն իմաստից. յիւրոցն կոչել
վերակացութիւն քաղաքի, զառ
յինքենէ քարոզս բացատրապէս
հրատարակել։

Իսկ նորա 'ի բարձրագոյն յայս
կոչմանէ խուսափեալ, անկար առ
վերակացութիւն ժողովրդեանն Ա-
ստուծոյ զանձն համարեալ, Դժուա-
րին, ասելով, միջնորդ ընդ Աստու-
ծոյ և ընդ մարդկան լինել։ Քանզի
գիտեմ ստուգութեամբ, զոր հո-

գաբարձութիւն հօտից յանձն ա-
ռին, որպէս ընդ անձանց և ընդ ժո-
ղովրդեանն՝ ունին տալ համար ա-
ւանդողին զնոսա երկնաւոր հո-
վուապետին. և շատ ինձ իմոց պար-
տեացն ծանրութիւն, հիմ և զօ-
տարացն 'ի վերայ յաւելուցում,
մանաւանդ զի և անհարթ մարդկան
են կենցաղավարութիւնք, այլք այլ
ինն ունին ընթացս օտար 'ի մի-
մեանց. ոմանք բնաւորականս, և
կէսք նեղդործականս յընդգիմա-
բաժանեալ տեսակս՝ ըստ ախտից
զանազանութեան զբարոյն կերպ-
արանեալս, յառեաց, յինձ,
գայլ, աղուէս, խոզ,
արջառ, ձի, ոչխար, և որ նոյնպէս-
սիք. և գժուարին զսոսա 'ի մի վայր
ըստ հովուականն ածել օրինի. խա-
ղաղութեամբ զդօնացեալս ըստ իւ-
րաքանչիւրոցն հարկաւորեալ ձեւա-
նալ, կամեցողացն զնոսա շահել.
ըստ որում յայտնիկ քաջավարժն
աղաղակէր. Եղէ ընդ Հրեայսն իբ-
րեւ զՀրեայ, ընդ անօրէնսն իբրեւ
զանօրէն, ընդ տկարսն որպէս տը-

կար, և ընդ ամենայնի ամենայն, զի զամենեսեան շահեցայց։ Այսր ամենայնի անկար զանձն վարկուցեալ, հրաժարէր 'ի պատուոյն և յասաքանչանին ծանրութենէ. Լաւագոյն զօրավարի, ասէր, ոչ կարողի բարուոք զօրականացն առնել զվերակացութիւն հանելով և ածելով ըզզօրան 'ի հանդիսի՝ ընդ այլոց ուժեղն քաջահանճարի զինքն դնել. վերակացութեամբ. և նաւուղղի ուրուք ընդ ծովականն անկարացեալ պատերազմել փորձութեանն՝ ընդ խոհեմագունի լինել և նաւապետութեամբ, քան անձին և նաւասատեաց լինել գաւող անընտրողութեամբ. նոյն և բժշկի քան անհմտութեամբ զյոլովս մահացուցանել, ընդ ճարտարի ուրուք և զանձն դնել բժշկութեամբ։

Է. Զայս ամենայն զմտաւ ածելով, որպէս 'ի ծովական ալեաց վտանգեալ 'ի նաւահանդիստս անդորրի փութայր զամայութեանն ողջունէր զկեանս։ Ընդ Յովհաննու և

ընդ Եղիայի յանապատի բնակել յօժարէր. զխորհուրդն գործ արա-
բեալ 'ի նկատեալն տեղն փութայր, 'ի մարմնի ընդ անմարմինս՝ անմար-
մնական վարուք հանդիսանայր, ըզ-
նախնեաց հարցն առաջի աչաց ու-
նելով վարուցն կէտ՝ ջանցանել
ընդ նոցն ձեռնարկէր։ Սակաւուք
Ճգնողակից եղբարքք զառաջինն
բնակէր իբր զնախակրթութիւն ի-
մն առաջիկային, զի նախ զհնազանդու-
թեան և զխոնարհութեան լցցէ օ-
րէնս, ըստ սարսափ անապատակա-
նաց՝ իբր 'ի վարժս կրթութեան
մանկունք, և ապա զինու յաղթու-
թեան սպառազինեալ ախոյեան էլ-
ցէ գիմամարտին մենամարտիկ հան-
դիսիւ. զի մի անփորձաբար յաս-
պարիզին ելեալ զէնընկէց յանդի-
մանեացի։ Յորում և բնակէրն բա-
զում խոնարհութեամբ և հեզու-
թեամբ ընդ եղբարս զնուաստա-
գոյն սպասահարկութեան լցուցա-
նելով զչափ լռութեամբ բազմաւ.
'ի դէպ ժամանակի զպատշաճն խօ-
սելով սիրով առ ամենեսեան 'ի

ձայն չափաւոր, 'ի բանս կարգաւոր, 'ի կերակուր պարկեշտութեամբ, յաղօթս մնաւորութեամբ, 'ի տքնութիւնս ժուժկալութեամբ, յընթերցումն անձանձրոյթ, յարտասուս անընդհատ, ծով առնելով ջրով զգլուխ, և աղբեւր զաչս արտասուաց. նստելով լռիկ 'ի տան, և տալով հոգոյ զբերան, զգիշեր տիւ առնէր աղթնութեամբ, և ըզտիւ գիշեր անզբաղութեամբ:

Եւ զայսոսիկ կատար զհանդէսն համարեալ, եթէ ոչ մերկացի յապարիզին իւղով աստուածային շնորհին օծեալ, որով և զբռամբ վերագն եկեսցէ: Եւ անդ առանձնացեալ սկիզբն վարուց առնէր, ըստ որում 'ի տեղեաց փոփոխումն և վարուց առաւելութիւն, և անօգուտ ըզխօրինն գնէր անապատ, եթէ ոչ և յառաքինութեանցն խորս գիմեսցէ, նախաշաւիղ յոր մինչեւ ցայնվայր մեծին լինէր հանդիպի: Եւ ապա զինչ առնէր. ըստ նմանութեան զօրավարացս որ 'ի տեղիս մատչին մարտին, հանդէս առնեն զո-

ցաց. նոյնպէս և նա զառաքինութեանցն զինուորս 'ի հանդիսի կացուցանէր, զկառս մարմնոյն զդայութեամբ ընդ հոգեկանն լծեալ, 'ի վերայ խոհականին բազմէր կառավար: Եւ յայսոսիկ յոլովք յառաքինութեանցն զինուորաց ինքնակատարք յամայութեան վայրի լինէին, և ներհակքն ենթադրեալք, այսինքն՝ բամբասանք, հայհոյութիւնք, դատարկաբանութիւն, սուտախօսութիւն, երդմնահարութիւն, կեղծաւորութիւն, մարդահաճութիւն, շոգմոգութիւն, երկբանութիւն, ատելութիւն, չարախօսութիւն, ոխակալութիւն, զբաղարտութիւն, յափշտակութիւն, նախանձ, թշնամութիւն, հարբսահարութիւն, լուտանք, հակառակութիւն, անհնազանդութիւն, կռիւ, սուտ վկայութիւն, թողութեամբ ասել և որ 'ի սպանութեան, 'ի շնութեան, և 'ի գողութեան, և որ նոյնպիսիք են բանք: Քանզի ահա այսոքիկ և առանց աշխատութեան յայնպիսում կեանս կատարին:

թող զոր դիւրաբար և այլքն զկնի հետեւին, մեծամեծքն և բարձրագոյնք. յորմէ և ասուածխօսութիւնքն անդբաղապէս և մնաւոր ջերմագոյն և անընդմիջելի մշտազեղ արտասուօք. մինչ զի և ոչ դանդաղել ասել ընդ Դաւթայ. Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի։ Նա և զկերակրոյն հարկ վճարէր՝ ոչ ինչ կարի հեռաւորութեամբ յանմարմնոցն յանկարօտութենէ. զի 'ի կշեռս նուազս այնոքիկ չափեալ, և այն բազում անգամ արբանեկին ատուգեալ, 'ի տեղւոջն յորում լուութեամբ զանաւելորդն դնէր կերակուր, 'ի միւսումն գալստեան ողջ և կամ խուն ինչ նուազութեամբ գտանէր։

Այսպէս գումարումն առնէր զօրացն, որով և ընդ իշխանի օդոյս որ ընդ երկնաւ, ընդ այսս չարութեան զօրեղապէս տայր պատերազմ. 'ի լրումն ասացելոյն թէ Տեառնէի զսատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն. ահա ետու ձեզ իշխա-

նութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն։ Այսպէս ամենայնի յաղթող լինելով ախ-տից, 'ի յոլով ժամանակս բազմա-պատիկ ճգնութեամբ յանցաւորու-թիւն եւանէր, որ պատկ յաղթո-ղացն 'ի հանդիսագրէն պարդեւի։ Որոյ կատարած զինչ. եթէ ոչ ըստ անչարչար բնութեամբ եղելոցն յԱստուած խմացականապէս հպա-ւորութիւն, և 'ի հպաւորութենէն յայնմանէ հոսումն խմաստութեան և լրութիւն յաճախ գիտութեան. ըստ որում և այնմիկ մերձաւորք են և անուանին։ Քանզի զմտացն բա-ցեալ բերան, ձգեաց զՀոգին խմաս-տութեան ընդարձակմամբ սրտի. իբր զայն որ 'ի գերակատարն խմաս-տութենէ վկայեցաւ գեր քան զա-մենեցուն ընդարձակել զսիրտ 'ի բազձաձումն հանճարոյ. և մշտա-հոս բղխէր իբրեւ զաղբեւր, յա-ռաջէր որպէս զգետ, ծաւալէր իբր զծով. ըստ այնմ. Յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց. յորոց

ձայնէ սքանչացին զբօսանք ծովու. զոր մերձակայ անապատաւորացն տեսեալ սքանչանային, և փառս տային Հոգւոյն շնորհաբաշխի. և մեծաւ թախանձանօք հայցեալ 'ի նմանէ զբացատրութիւն եկեղեցական զարդու և սքանչելատիպ կարգաց որ նմին, և զնորհուրդ փրկական բաշխմանն մարմնոյ և արեան կենարարին, եթէ առ ինչ դիտաւորութիւն յեկեղեցւոջ կատարի:

Ը. Իսկ ծառայն հաւատարիմ զաւանդ արծաթոյն տեառն իւրոյ ոչ կամեցաւ ծրարել 'ի ծուլութեանն վարշամակի և 'ի դատարկութեան թաղեալ յերկրի, այլ տալ 'ի տրապիզիտս՝ որով կրկնակքն յաճախեն պաղատնութիւնք. և ուրախութեան մակց հոլովի շաւիղ. ձեռն 'ի գործ արկանէ բացատրութեանն քահանայապետական զարդուն, և որ 'ի նմանէ խոնարհ ասպիճանք յերիս երրեակս տարօրինեալ 'ի ոչիպ վեհիցն և գերազարդ քահանայապետութեանցն, և զե-

կեղեցի սուրբ՝ Երկնի և միանգամայն որ 'ի նմա խմանի սորայս գաղափար, և մեզ լինել տաճար կենդանի և բնակարան Երրորդութեանն։ Զի՞նչ ապա և յաղագս մեծն և հրաշալի մերոյ փրկութեանն խորհրդոյ, եթէ զինարդ ընդարձակ բանիւ և մանրամասն քննութեամբ զկարծր զայն և անճաշակ անկիրթն ընդաց ծաղրողական մանրեալ տառամասքք խուզման, տայ 'ի ճաշակ աղայացելոցն 'ի Քրիստոս. որոյ հալոզական սիրուն յանձնական մասունս զայն լինչ 'ի աղայութեան եղեալն յանկարծորէն 'ի կատարեալն ցուցցէ բարձրացեալ հատակ, այսինքն թէ զինչ խորհուրդ մարմին և արիւն լինելոյ Բանին և նովաւ գալ 'ի չարչարանս խաչի և մահու, և ամենեցուն վասն փրկութեանն զմահ ճաշակեալ. և կամ զինարդ զնոյն խորհուրդ անճառելի 'ի հաց և գինի աւանդեալ աշակերտացն, և ոչքան 'ի նմանէ շահ հաւատով և յուսով ճաշակողացն, և ոչ զշնորհաբաշխութեանն անխափար սիրէ զճառագայթս։

Եւ ոչք դարձեալ 'ի մեծէն թափուր եղեալ 'ի շնորհէ, միանգամայն և զամենայն զկոչ և զկուրթ որով քարընդոան ընթացողքն լինէին ոգիտուութեանն և թերահաւատութեանն գլորմամբ, ատուածային բրչաւ բանին տապալեաց, և անմոլար և առանց սայթաքելոյ հորդեաց պողոտայ, որք աներկբայ հաւատով 'ի սոյն հեատեւին։ Պատեւ զօրաւոր առ այս քան զբան որ արդեամբքն առ յինքեանէ տայր վարդապետութիւնն անյաչաղ ապամբք տեսողացն։ Զի ո՞ ոք էր որ զգուշութիւն նորա 'ի խորհրդեանն սուրբ տեսանէր, և ոչ գայր 'ի գիտութիւն անճառ խորհրդոյն։ Ո՞ որ զլի երկեւղիւ նորայն հայէր զկերպարան, և ոչ զահաւորութիւնն իրին նկատէր։ Ո՞ որ աղբեւրաբար արտասուացն հոսումն յառէր, և ոչ վաղվաղակի զառ 'ի նմանէ զանկապտելի բարեացն պատուղ կթէր։ Ո՞ որ զզգալի նշանակացն կերպ տեսանէր, և ոչ իսկոյն յիմանալեացն տեսիլ փոխար-

կէր. զի պատկառանք և շուք երե-
սացն, զասատուածութիւնն առաջի
կալ յայտնէր. և հեզաբար արտա-
սուացն ի ջուրն զկենարարին ջարչա-
րանս և խաչի խնամատուութեամբ հայ-
եցողացն վարդապետէր։ Եւ անձ-
նական խնդութեանն ցոյց մահու
պատարագելոյն զ'ի մեղացն մա-
հուանէ կենդանութիւն քարոզէր,
և աշխատութեանն երկոք անխոնջա-
պէս կալ 'ի սպասու՝ յաշխատութե-
նէ հանգիստ նովաւ գուշակէր, և
խոնարհութեանն դէմք զբարձրն
բարձանց մերձ ուսուցանէր, խոր-
հրդականն զդէսա զպանծալին
զարդ մաքրականն 'ի նեղքուսա վա-
րուց բացատրէր։ Պաշտօնէիցն
խումբ զհրանիութիւնն անիմանալի
ձայնակցութեամբ փառատրու-
թեանցն կցորդ լինել պատմէր,
քաղցրահայեացն տիպ զսիրոյն ճըշ-
մարտի հպատուրութիւնն յայտնա-
բանէր, և բոլորին որ 'ի նմին տե-
սիլք արտաքին՝ նեղքնադունիցն էր
հրապարակող. բաւականք այնոքիկ
ի բը խնամաւ իւիք զմիմբրեալսն

զարթուցանէր, և զծոյլսն և ըղ-
հեղգսն 'ի նախանձ բարեպաշտու-
թեան յարուցանել։ Որ թերահա-
ւատութեան ալէօք տարբերին՝ հա-
ւատոյն նաւու անդորրեալ. և որք
յուսահատութեանն հոգմոյ բերին՝
քաջայոյս նովին հասատատել. և որք
ոգիտութեանն ախտիւ ծնգին՝ ձե-
ռընտուութեամբ հանճարոյն կան-
գնել։ Քանզի քաջարուեստ կաղ-
միչն ամենից հայելի եդ զնա 'ի մի-
ջի. արձան հասատատուն կանգնեաց,
զի յողդողդքն կազդուրեսցին. աշ-
տարակ անպարտելի կառոյց, զի
փախուցեալքն պատսպարեսցին.
բժիշկ խմաստուն յայտնեաց, զի որ
հիւանդոտք են առողջասցին. ջահ
լուսոյ պայծառացոյց, զի կուրա-
ցեալքն նովաւ լոյս տեսցեն։ Ծառ-
բաղմապտուղ անկեաց, զի այնու
աղգք կերակրեսցին. տղբեւր յոր-
դահոս բղխեաց, զի որ տապացեալք
խցեն զովասցին. խորան հովանւոյ
ստուեաց, զի անյարկքն տաղաւա-
րեսցին. քաղաք ամրագոյն փակեաց,
զի 'ի կերսողէն յապահովասցին. հո-

վիւ իմաստուն կացոյց, զի պահպանեսցին 'ի պատառողէն. շուտմարան դանձուց շնորհեաց. զի աղքատքն փարթամասցին։ Եւ ամենայնիւ յամենայնի պիտանացու իւրաքանչիւր հասակաց մարդկան և վարուց լաւագունիցն առաջնորդութեամբ, և յոչ նոյնպիսեացն խոտորմամբ։

Յայսոցիկ համեղութեան պտղոյ ճաշակեալ, և 'ի քաղցրութեան ուղխից զմայլեալ եւս զնեբքսադոյն սորին կանոն խուզէին, զոր առձեռն ընպասարատ նիւթ մաղթանաց ամենեքեան յանձին բերէին. որով առ էլ վերին անձնականին լինէր զօրութիւնն՝ զնոյն հայցմամբ առաջի արկեալ խնդրէին զբացատրութիւն զաստուածիմաստ հոգերդողին նուագ՝ որ միշտ յեկեղեցւոջ սրբում՝ աննուազ ձայնիւ պաշտի. որպէս զի մի անբանաբար, ասեն, սաղմոսերգութիւնն 'ի մէնջ լինիցի. այլ լեզուոյ ընթացս լծակից և ըղմասացն կարասցուք առնել զօրութիւն։ Քանզի յար նուաւ խօսելով զհամեղութիւն ճաշակելեացն

քաղցրութեան առնուլ ոչ զօրեմք։ Իսկ նա, ոչ ծանրացեալ, այլ զօրէն մանկանց գեռածին մարց, որ զկաթինն ճմլել սիրեն զառաւելութիւն առ 'ի մանկանցն անուանդ վայելից. այսպէս և երջանիկս հայր՝ զաստուածային կաթն խմասից 'ի մտաւորն ստանդիեցաց ճմլեալ տայր յարբումն վարդապետութեամբ հոգւոյն ծնեալոց։

Սկիզբն այնուհետեւ առնէր՝ ըստ բազմազեղն որ 'ի նմա Հոգւոյն շնորհի՝ գրել զմեկնութիւն կատարելագոյն թուովք չափելոց Դաւթայն սաղմոսերգութեանն։ Որպէս աստուածային շտեմարանացն գոլով պետ, այնպէս աննիւաղաբար առեալ բաշխէր կարօտելոց. ոչ զլանայր զծառայակիցս 'ի տէրունեացն աւանդից ոգւոյ կերակրոց. գրիչ առնէր զլեզուն Հոգւոյն խմասից՝ զնոյն շարժողն, կցորդ և զմատուն երկոք վաստակոց 'ի նիւթս քարտի։ Ի խորան մտանէր արքունական գանձարանին, զոսկին մաքուր և զարծաթն ընտրեալ ընդ պատուա-

կան քարանցն արտաքերեալ՝ որք այ-
նոցիկ կարօտք են՝ բաշխէր։ Զ հացն
կենդանի զոր որք ուտեն ոչ մեռա-
նին՝ սովեցելոցն նմին ընձեռէր. զի-
մաստութեան արբուն 'ի հնձանաց
անտի որ ծարաւիքն են արբուցա-
նէր. զանծաքելին ժանեացն ճը-
ճեաց զընորհի հոգւոյն ծածկոյթ,
որք սառուցեալքն են՝ զգեցուցա-
նէր. արիութեան զինուք որ քա-
ջամարտիկքն են 'ի ճգուն զօրեղա-
պէս սպառազինէր։ Եւ թէ ումեք
ըղձալի էր անհեռազօտելի աս-
տուածային խորոյն լինել հասու,
զնա ընթերցցի. եթէ աստուածա-
բանական որք կարօտ ճառից լիցի՝
'ի նմանէ զլսումն ընկալցի. և թէ 'ի
անօրինականի գիտութիւնն ախոր-
ժէ գալ խորհրդոց՝ նմա հետեւեսցի։ Եթէ
զոգւոյ առ մարմին զու-
գակցութիւն և զընդդիմակայութիւն
հայցեսցէ՝ 'ի նա յեցցի. եթէ զգայ-
ութեանցս յարմարութիւնն և զա-
տուութիւն խնդրեսցէ՝ առ նա ընթացցի.
եթէ զբնաւորականն և որ էկա-
մուտք բացատրոհել որք ախորժէ, 'ի

նա յարեսցի։ Եթէ զԹշնամւոյն դաղտնաձիգ նեռաձգութիւնս ախտաւորական շարժիւք իմանալ ոք կամեսցի, զնա մի Թողցէ. Եթէ զԵղանակ դիմադրութեանն նոցին հայցեսցէ, իբր աւանդեալ պահեսցէ։ Եթէ զվերակացուս սխտից քննեսցէ, նովաւ ուսցի. Եթէ զառաքինութեանցն սեպհականել սաացուած կամեսցի, 'ի նմանէ մի հեռասցի. Եթէ զչարութեանցն 'ի բաց Թօթափման յարացոյց խնդրէ, նմա գիրկս արկցէ։ Եթէ զվերհիցն առ մեզ ծածկապէս վերակացութիւն իմանալ խորհեսցի, նմա ընտանեսցի. Եթէ զչարութեանցն սովորութիւն հատանել յօժարի, նովաւ իմաստնասցի. Եթէ զբացականան բարիս կոչեսցէ, 'ի նմանէ խրատեսցի. Եթէ պատրաստի հերքել չարին զօրութեանն, 'ի հաղորդութիւն զնա ընկալցի. Եթէ կցորդութեան վերնոցն ձեռնարկեսցէ, զնա 'ի խորհուրդ տացէ. Եթէ ըղկենցաղոյս ընդունայնութիւն տեսանել խնդրէ, 'ի նորոյն հայեսցի

խրատ։ Եթէ ստորնայնոցս մոռացման բաղձայ, հանճարով նորին վարեսցի. Եթէ զնոր նիւթոյս՝ յոչինչ դնել հաճեսցի, յառաջնորդութիւն զնա ինքեան առցէ. Եթէ 'ի կանգնումն անկեալ փութասցի, 'ի նմանէ ձեռնկալեսցի. Եթէ մեղուցեալ զոչման կարօտի, նովաւ առ այս օժանդակեսցի. Եթէ շնորհին չափ գիտել մաղթէ, ոչ ուսուեքքան թէ 'ի նմանէ հայցմանն հասցէ. Եթէ զօրական որ ասպարիզին խնդրէ զմարտի վրէժ, պէտաւ նովաւ կրթեսցի. զի առ ամենայն զօրէ, ամենից բաղուկ կարկառէ, ըզբոլոր ցնծալի զախուր առնէ, համայն ուժգնութիւն ակարաց շնորհէ. այսքան և այնպիսի որ առնայն հային՝ պարգեւէ։

Իսկ զմեւան ոնբ եդից, որ ամենայնի գերաբնութեամբն յաղթէ. զիմաստանոյն ասեմ իմաստանոց՝ և որ հանճարն է հանճարեղաց. որ յիմաստից տուողէ գովեցաւ անբաղդատելի գոլով համայնից. որ և 'ի նախնեաց հզօր մեկնչաց տիրապէս

անթարգմանելի։ Բայց թէ գուն ուրեք ըստ մասին 'ի խորհրդոցն Է-
ղեւ Ճառէլի, որ ապացուցիւ ան-
թուելի բաղդաւորութիւն էկն եղա-
նակաց, և որ զուշնայնութիւն անո-
սի կենցաղոյս՝ որպէս են՝ մեզ բա-
ցայայտեաց, և զհետեւեալսն զան-
մտութիւն ըստ ոչ ուամ օրէնն էր՝
բանիւ Ճառեաց։ Եթէ զինքդ ըզ-
հիւսս բանից անյայտութեամբն
պարփակելոց 'ի լոյս տեսութեանն
ածեալ դիւրալուր բանիւ քարո-
զեաց. և զոր 'ի նմանէ զօրեղն խոր-
հուրդ ըստ նոյն աւանդիցն հրաշա-
բանեաց։ Զոր թէ զայլովքն զամե-
նեքուամբք զանց արարիցս, 'ի վերուստ
առ 'ի նմա պարգեւ շնորհի, այս
միայն բաւական 'ի հիացումն ածել
զլսօղս։ Եթէ զօտարացեղսն և զայ-
լազինսն կարծեալ կարգ բանից,
զինքդ ըստ յարմարութեանն ան-
ստերեւոյ բերեալ մտաց տեսու-
թեանն, որ թէ 'ի բացատրութեանն
պատկանութիւն ոչ նայեցցի, քան
զամենայն որ ինչ հայելի գիտման
մտաց կարգն ծանիցէ։ Թողից և

զայլան ամենայն հանճարիմացն մեկ-
նողութիւնս մանաւանդ թարգ-
մանութիւնս հոգեշնորհ տառից՝
զոր յայլասեռ լեզուաց թարգմա-
նեալ եկեղեցւոյ շնորհէր մանկանց,
զվարս հարցն սրբոց, զկրաստականն
ճգնաւորաց, զսահմանադրութիւն
միաբանակեցաց, զվկայութիւն նա-
հատակաց, զմեկնութիւն կուսակա-
բանաց. որով ամենեքումբքս այսո-
քիւք շքեղաշուք պճնեալ զարդ-
արեաց զեկեղեցւոյ բարեձեւու-
թիւն :

Թ. Յայսոսիկ և զօրութեանց
խառնին հրաշք. այսոց հալածումն
և ախտից բուժումն, զի յոլովից
յայտնեաց վտանգից բժշկութիւն
շնորհէր աղօթիւք. որ և անկարա-
ցեալք կալ առաջի աղաղակաւ ըզ-
փախուստ առնէին. զի որ զնիւթա-
կանաց այսոսն հալածեաց հանդերձ
նոցայովքն արկածիւք յոգի ըստ
կամաւոր քաջահաճութեան, իրա-
ւապէս 'ի մարմնոց մարդկան հեռեալ
զակամայն բռնադատութիւն, զի

փառաւորէ զփառաւորիչսն, ըստ որում անտուսն է բան խոստմանն։

Այսպիսեացս յաՃախուԹեամբ, և մանաւանդ խմաստիցն և վարուցն լուր համբաւոյ յամենայն ուրեք տարածէր. որ և բազումք երԹային և գային զօգտակարս իւրեանց հայցելով. իսկ սրբոյն գԺուարեալ ընդ լուր համբաւոյն, տարաշխարհիկ լինել ախորժէր. զԵգիպտայքն ընԹեռնլով 'ի նոցին տեղիս փափագէր. նա և զմեծի և առաքելաշնորհ հօրն մերոյ և Լուսաւորչի զմենաստանեացն լուեալ՝ ըղձայր Թերեւս 'ի նոյն լինել տեղի ըստ նախասացեալն խորհրդոյ։ Վասն որոյ երկիցս և երիցս միով արքանեկաւ յուղն անկեալ զանխլաբար յամենեցունց 'ի նախանկատն ժամանել տեղիս, և յոլովս հեռիոտս հատեալ անցեալ յերկարուԹիւն Ճանապարհին, բազում աշխատուԹեամբ և պատուհմամբ ոտից ըստ անսովորն այնոցիկ եղոյ. այլ 'ի գլուխ ոչ ելեալ խորհրդոյն, 'ի հետամտացն բռնաբար արգելլ լինելոյ. այլ նա յարաժամ

մեծաւ ցանկութեամբ 'ի նոյն թեւ-
ւակոխէր։

Արդ 'ի յայսքան վարուց մաքրու-
թեան և յորդախաղաց վտակաց ո-
գեշնորհ վարդապետութեան՝ եր-
կարաձգեալ լինի ժամանակն. իսկ
որ յառաջխնամութեամբ մինչեւ
յայս ածեալ հասոյց՝ զկայ առնու
և դադարէ 'ի անօրէնութեանց, և
ոչ երբեք։ Եւ զինչ առնէ. յա-
ռաջ կոչէ 'ի նախաւանդեալ շնոր-
հին գործառնութիւն. որպէս թէ
ասիցէ արդէն, Ի բաց դիր զեր-
կեւղդ, հեռացիր 'ի կասկածանաց.
զի որ զտկարութիւնն փաստաբա-
նէիր իրողութեանն մեծի յանձն-
առութեանն, և անկար 'ի միջնոր-
դութիւնն մարդկան և Աստուծոյ
զանձն դատէիր, լաւագոյն ընդ իշ-
խանութեամբ այլոց համարէիր,
նախ քան որոց 'ի քեզ իշխել սարը-
կաց, և այն ոչ տարագէպ և ան-
խորհրդաբար, այլ հանճարոյ բարձ-
րագունի և կատարելոյ նախ քան
այլոց կարդել իշխան՝ զծառայա-
կանն սարտագասել ախտիցն հոյլս։

Այլ արդ փութա 'ի գործ աւանդին, զի ահա զպատերազմ հարեր, զախոյեանն վանեցեր, զընդդիմամարտն զգեանեցեր, զգոռոզն կործանեցեր, զամրութիւնն տապալեցեր, զդղեակն յատակեցեր, ըզբարձրավիզն խոնարհեցուցեր, ըզզէնն փշրեցեր, զաղեղունս խորտակեցեր, զվահանն հրով այրեցեր. վասն զի զախտն ստորադասեցեր, զբնութեանդ յարձակումն նահանջեցեր, զնշխանականդ ակրացուցեր որ ընդ իշխանութեամբ հնազանդեցուցեր: Եւ ոչ է պարտ յայսմ հեռէ քաղաքի լինել 'ի թաքստեան, որ առաքինութեանն շինին շինեալ, և ոչ հաճի ընդ ծածկութի, որ ատուածային է հրով լուցեալ. այլ յայտ յանդիման որոց հանդերձեալն են վայելել գնիլ: Վասն որոյ փութա, զի հօտն աւանդեալ քեզ դաղանակուր է. բանական ոչխարքն փողոտեալ, անբիծ գառինքն 'ի գայլոցն կեղեքեալ. այդին վայելուչ ապականեալ 'ի դաղանէն. անդն քա-

ջաբեր՝ անտառամոլ 'ի չգոյէ մշակողն. հարան ողջախոհ, անփառունակ, զփեսայն ոչ ունելով պսակ. կողոպտեալ ողջախոհութիւնն, մերկացեալ ոսկեհուռն զարդ, քառամանեակ պատուիրանին ոչ է ըզպարանոցաւն. գինդն կարկեհան ընդ սարդիոն յեռեալ՝ ոչ զուռնկն զարդարէ. ապարանջանք բարեգործութեանն չէ 'ի ձեռին. զաստիսին ծրարս ոչ ունի ընդ ստեամբքն։ Այլ արի էջ վաղվաղակի հովիւդ քաջ. զի մի տուժեսցես զհօտն. փութա աշխատել մշակդ 'ի ցանկ արդել այգւոյն. երագեա երկրագործդ ժիր առ 'ի խլել զփուշն։ ժամանեա յարդարիչդ եկեղեցական դատու, զի պճնեսցի հարսնարանն։ Արդ յայսոսիկ չնորհն վարէր 'ի ձեռին, որ ընդ այն ունէր ժամանակ զհոգաբարձութիւն հանուրն դիտողութիւն հանդերձ ժողովրդեամբն. որ 'ի հովուէն քաջ զրկեալ էին, 'ի խնդիր եկանէին հրամանաւ հեղինակին, աղերս արկանէին, արտասուօք մաղթէին.

քանզի տեսանէին զլոյսն 'ի բացեայ և զինքեանս յաղջամուղջ. զբժիշկն հեռի, և զինքեանս ախտացեալ. մեկուսի զաղբեւրն, և ծարաւի զինքեանս. անձեռնհաս զգանձն, և զինքեանս 'ի խոր աղքատութեան. զուրախութիւնն անջրպետեալ, և 'ի տրտմութեան զանձինս։

Իսկ զի՞նչ ախտակիցն ամենայնի և հաղորդ վշտաց. 'ի տարակուսանս անկանէր, յանհնարս մտանէր, երկբայութեամբ զառաջանէր, յերկուս կայր 'ի վերայ շաւղաց յառաջելով և նուաճելով. ընդ անտերունչ լինելն հօտին դժուարէր, և ընդ անտպատէն զոփէր. կարեւոր զբաղմացն շահել փրկութիւն՝ համարէր, և զանզբաղութիւն անապատին զլանալ ոչ յօժարէր։ Յառաջ կոչէր որ յոքունցն էր օգուտ, և յետս ընկրկէր որ անձինն էր տոյժք. զանընդմիջաբար խօսակցութիւնն Աստուծոյ յիշէր, որ անապատականն էր կենցաղս ձեռնտու, և ոչ հայցողացն զինքն տայր. և որ զբաղմացն նուիրէր մաքրութեամբ

անձինս Աստուծոյ 'ի հաւատարմութիւնն յորդորէր։ Քանզի գիտէր իսկ թէ քաղաքայինքն զբօսանք ժըխորեն զանապատին վճիռ տեսութիւնս. և բազմահոսանքն բանք ըզլռութեանն եղծանէ օրէնս։ Զպաւզոսին ասա կրէր զկիրս, Եղանել 'ի մարմնոյ առտի և մտանել առ Աստուած փափագեմ, և ինալ առաէն կարեւոր եւս վասն ձեր։ Եւ ոչ այս միայն, այլ և յանուանութեանն իրէ երկուցեալ զհնազանդութեանն պատուէր օրէնս. քանզի Հարկ որ վերակացուն էր՝ բռնադատէր, անհրաժեշտ ցուցեալ զհրամանն. այլ և որ յանձնաւորութիւնն նախկին հովւութեանն հարկաւորապէս յայնոսիկ ձգէր։ Վասն որոյ թէ և յերկրորդ կամաց, սայր զանձն խնդրողացն. խաղաղական և սիրալիր համբուրիւ ընդ արտասուաց յորդահոսանաց՝ ողջոյն եղբարցն առեալ՝ հրաժարէր 'ի նոցանէ, և յուղն անկեալ հասանէր անդ։

Անդանօր էր տեսանել անբերբելի խնդութեամբ լցեալ զժողովուրդն.

ընդ առաջ բազում պատուով ելա-
նէին քահանայականն խումբք յո-
լովախուռն ժողովրդովք, մեծամե-
ծաք միանգամայն և ռամիկք, զՀո-
վիւն քաջ տեսանելով յայցելու-
թիւն եկեալ հօտին։ Իսկ ոչ դա-
տարկութեամբ տայր զանձն նո-
ցա, այլ զբազմապատիկ խմաստու-
թեանն 'ի վար արկեալ զբան եր-
կնային մշակութեանն լինէր ատատր
անդանդաղ 'ի գիշերի և 'ի տուրն-
ջեան, զատուաձախօս վարդապե-
տութեանն սերմանս 'ի բանական
յանգն սերմանէր, զպահպանու-
թեան օրէնս խնամով ուսուցանէր,
եթէ որպէս 'ի վերասակարն ատպոյ,
և հատաքաղ թռչնոյն, և հեղձա-
կանն փշոյ, անվրէպ զսերմանան
ապրեցուսցեն։ Ի վերայ հատանէր
ամենայնի ժամու և տարաժամու,
յանդիմանէր ամենայն երկայնմտու-
թեամբ և վարդապետութեամբ.
քանզի յուշ նմա մարդարէականն
լինէր բարբառ. Որդի մարդոյ, դէտ
կացուցի զքեզ 'ի վերայ տանդ Ի-
սրայէլի. եթէ տեսանիցես զսուրն

եկեալ և ոչ ազգ առնիցես փողով, և եկեալ սուրն գտանիցէ զոք անպատրաստ, նա յանօրէնութեան իւրում մեռցի և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Եւ դարձեալ. Եթէ հովիւք Իսրայելի լուա՛ցուք, այսպէս ասէ տէր. մինթէ հովիւք զանձինս արածէն և ոչ զոչխարս. քանզի զկաթն ուտէք և զասրն զգենուք և զգէրսն զենուք. և զբեկեալն ոչ պատէք, և զհիւանդն ոչ ողջացուցանէք. ահաւասիկ ես 'ի վերայ ձեր հովիւք Իսրայելի, և դատեցայց ոչխար առ ոչխարսն, և խոյ ընդ խոյսն, և գառն ընդ գառսն։ Յիշէր և զհիմանն եկեղեցւոյ որ առաջին զհովուութեանն 'ի ՃԸՇ մարիա հովուապետաէն ընկալաւ ըզբան, որում և յանձն իսկ արար արածել զհօտն. այն զոր գրէր առ հովուակիցսն. Արթուն լերուք և սկեցէք. զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառեւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ։ Որում 'ի դիմի հարկանիջիք հաստատեալք հաւատովք. Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ

է Աստուծոյ, մի իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի իբրեւ տիրելով վիճակաց, այլ լինել օրինակ հօտին, զի յերբեւել հովուապետին ընդունիցիք զանթառամ փառաց պսակն։ Ո՞չ ընտրութեան սիւնն եկեղեցւոյ՝ քարոզն ճշմարտութեան աւանդէր հովուաց խրատ. Զդոյշ լինիցիք, ասէ, անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչ և վերակացու. քանզի գիտեմ թէ յետ իմոյ եկանելոյ յաշխարհէ գայցեն գայլք յափշտակողք որ ոչ խնայեսցեն հօտիդ, և 'ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Զի՞նչ և հովուացն հովուապետ Յիսուս, Որ ոչ մտանէ ընդ դուռն 'ի գաւիթ ոչխարաց, նա գող է և աւազակ. իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց։

Ժ. Զայսոսիկ և առաւել քան զայս գիտելով երջանիկ հայրս և վարդապետ զգուշանայր ամենայ-

նիւ 'ի պահպանութիւն հօտին բա-
ղում փութով և վաստակօք. քաջ
այսոցիկ հովուաց ջանայր զինքն
նման կացուցանել՝ դնելով զանձն
'ի վերայ հօտին. երբեմն հաստատակ-
օրէն վարդապետէր, և երբեմն ա-
ռանձին ընդ իւրաքանչիւրսն խօսէր.
բազմահմուտ ճարտարութեամբ՝
ըստ որում պէտքն պահանջէր՝ զիւ-
րաքանչիւր ոք որսայր. զմանս սաս-
տիւ յանդիմանէր, և զկէս մեղ-
մով խրատէր. զայլս ողբանօք
դարձուցանէր, և զկէս ահարկու
գիմօք նուաճէր. ոչք ապերասանք
և ընդվզեալք էին, գեհենին այր-
մամբ և տապարին հատմամբն կա-
սէր. և որ գիւրալուրքն էին ալքայ-
ութեանն, յանբուժելի ցաւս էին
ծնգեալք՝ արտաքին խարանաւ կըտ-
րէր։ Եւ ոչք զօրութեանն բուռն
հարեալք՝ հանգստեամբ դրախտին
հրճուեցուցանէր. ոչք սովորու-
թեան չարեաց անլուծիւ հանգու-
ցիւք կապեալք, անքուն որդանց
խածանող ժանեօքն՝ խղէր. և ոչք
'ի բարիս կրթեալ՝ 'ի հաւատոց հօրն

գոգ գրգէր . ոչք յարուԹեան յու-
սով զօրացեալք էին՝ հաստատէր .
և ոչք յայնոսիկ հիւանդ , ողջացու-
ցիչ բանիւք բժշկէր ։

Եւ ամենայն ուրեք ընդդիմաք ըզ-
ներհակն քակէր . անաչառու-
Թեամբ յանդիմանէր , ոչ առնոյր
ակն 'ի հզօրէ , և յաղքատս ոչ
խնայէր . ոչ բռնաւորի երկեւղ
նուաճէր , և ոչ տկարուԹեան տայր
համարձակել , այլ սաստուԹեամբ
առ ամենեսին վարիւր . նպատակ
առաջի աչաց միշտ ունելով որով և
ինչ օրինակաւ զշահելն մեղմով և
կամ խստուԹեամբ . որով և զամե-
նեսեան ուռկանէր 'ի քարոզս աւե-
տարանին ։ Ո՞ ոք եղեռնագործ լսե-
լով զբան նորա , ոչ յատելուԹիւն
վաղվաղակի ցրտուԹեան իւրոց
գայր չարեացն ։ Ո՞ հպարտ և ամ-
բարտաւան , և 'ի լուրն հանճարեղն
նորա բանի՝ խոնարհ և նուաստ
զինքն ոչ ցուցանէր ։ Ո՞ լրբարար և
լկտի , և ոչ զողջախոհուԹեանն ոչ
ջունէր զվարս ։ Ո՞ ոք բարկացող , և
զցասմանն ոչ չինջուցանէր զԹոյնս .

ո՞ ատելութեան ծառայ չարի, և 'ի սիրոյն ոչ փոխէր օրէնս. ո՞ յորո-
վայնամոլութեան ներքոյ անկեալ, և պարկեշտութեամբ ոչ կրօնաւո-
րէր. ո՞ արբեցութեամբ գոլով յի-
մարեալ, և ոչ ջրմոլութեամբն խո-
հեմանայր. ո՞ յաչալանացն հա-
րեալ նեռիւ, և բարեմտութեամբ
զինքն ոչ բժշկէր. ո՞ զնախանձու-
ընկալեալ զսերմն, և ոչ յարգանօք
ընկերին հրճուէր. ո՞ ատութեամբ
սրով խոցոտեալ, և ճշմարտու-
թեանն ոչ լինէր ընտրող. ո՞ ագա-
հութեանն ախտիւ ըմբռնեալ, և
ոչ տիւռէր և ասայր աղքատաց. ո՞
հայհոյութեանն լծով կապեալ, և
ոչ արձակէր բարեբանութեամբն.
ո՞ չարանուագութեամբն գահավի-
ժեալ, և ոչ յառնէր 'ի կործանմա-
նէն. ո՞ անգթութեամբ պարաւան-
դեալ, և ոչ լուծանէր 'ի յախտա-
կցութիւն. ո՞ ընկերին դատմամբ
ըմբռնեալ, և ոչ արդեւք զանձն դա-
տապարտէր. ո՞ մարդահաճ ախտիւ
գլորեալ և ոչ զայն 'ի տեառնն վե-
րաբերէր. ո՞ ծուլութեանն կրիւք

վատթարեալ, և ոչ արուեստիւ զանձն զարդարէր. ո՞ խղճիւ մնացն խարեալ, և ոչ 'ի բաց զայնոսիկ դնէր. ո՞ ոք զրկող և յափշտակող, և ոչ չորեքկին զայն հատուցանէր. ո՞ ոք սատակիչ գողութեամբ կեցեալ, և ոչ վատակով շատանայր ձեռին. ո՞ ոք երդմամբ չարաչար վարեալ, և ոչ փափագմամբ բերէր զլուսանա. ո՞ ոք նենգութեան խորհրդով վառեալ, և ոչ զոյն սիրոյն շինչուցանէր։ Ո՞վ զկերդեաց արնկեալ զարմանա, և ոչ պարզութեամբ գոսացուցանէր. ո՞ զթշնամանաց աղերն լարեալ, և ոչ խորտակէր զայն վաղվաղակի. ո՞ զդրդռութեանն սրեալ նիզակ, և ոչ ըզքարի զնա հարկանէր. ո՞ ոք զոխութեանն գարմանէր ճճի, և ոչ սատակութեան սովով սատակէր։ Այսպէս հուր էր կիզանող՝ սատուածաբուզն շնորհացն բան ախտից ամենայնի. սուր էր հատանող 'ի վերէ երեւեալ չարին՝ յարմատոց, ջուր էր ողողիչ զկերպ հնութեան չարին արկածից։

ԺԱ. Մի 'ի բաց ընկեցիկ աստա-
նօր, և որ յիշատակին է արժանաւոր,
լինի։ Քանզի ըստ Թագաւորական
հրամանի Հայաստանեայ ժամանեալ սըր-
բոյս յարքայանիստ քաղաքն Կոս-
տանդնուպոլիս։ Եւ զի նախ խմաս-
տութեանն և առաքինութեանն
հասեալ համբաւ 'ի լսելիս ինքնա-
կալին և պատրիարգին, յոլով պա-
տուոյ և մեծարանաց 'ի նոցանէ լի-
նէր ընդունակ. նա և ըստ բնաւոր
նոցին խմաստասիրութեան, և յար-
գանաց հանճարոյ 'ի քննութեանն՝
բանս արկանէին զաստուածային 'ի
մէջ առեալ կոտակարանաց զ'ի նոսա
զանխուլ և գժուարաճառ բանս ա-
ռաջի արկանէին. և զի յոքունց ի-
մաստասիրաց էին ժողովք, ամենե-
քեան 'ի մի վայր գումարէին և ըստ
սեփհական իշխանութեան զհարցա-
կանն ինքեանց առնէին, 'ի նմանէ
զլուծմունսն պահանջեալ։ Եւ էր
սեռանալ իբր զաղաւնի 'ի մէջ բազ-
մաց բազէից խուճապեալ գոլով.
երկեւղ ինն զառաջինն ըստ ատենին

ահարկուԹեան բերեալ. սակայն 'ի Հոգւոյն շնորհ խրախուսեալ յաառաջ մատուցեալ իմաստասէրց հանճարով և հեզուԹեամբ առ պատասխանին՝ այնքան հաւանական ասելեալ, որ և անակնկալն էր 'ի նոցանէ. մինչեւ հիացմամբ պակնուլ 'ի զարմացմանցն, եւս ընդ միայնակն այլաբարբառ և տարաշխարհիկ գոլով 'ի մէջ այնքան ամԹոռակալ իմաստասիրաց. և գովական բանս 'ի բարբառ իւրեանց առ ինքեանս հանրապէս նմա շնորհեցին. Ոչ որպէս լուաք միայն, ասեն, այլ գերագոյն եւս տեսաք: ԻշխանուԹիւն ապա հարցման առեալ, գրով ըզհարցականն աւանդէր. և 'ի բազում աւուրս հռետորացն 'ի մի վայր գումարեալ խոկմամբ և առանձինն, էր ինչ զոր պատասխանեցին, և յոլովք այն յորս պարտեցան: Եւ այսպէս զարմանալի 'ի միջի նոցա երեւեալ, բազում պատուով և ձրիւք 'ի Թագաւորէն և 'ի պատրիարգէն անդրէն դառնայր:

Եւ զանց զբազում արարեալ

օթեւանօք 'ի սեպհականն ժամանէր գաւառ, առ Թագաւորն և կաթուղիկոսն մեծաւ զհանդիսաւորութիւն արարեալ խնդութեամբ, և զսովորականն 'ի վար արկեալ վարդապետական բանն, խրատէր և ուսուցանէր, յանդիմանէր և սասանէր, մխիթարէր և ողոքէր. և 'ի տօնսն մեծահռչակ և 'ի ժողովսն՝ զնշխանսն և զոք ընդ իշխանութեամբ զառաջնորդսն և զոք ընդ ձեռամբ անյաչաղաղէս զամենեսեան խնամարկելով։

Այլ ոչ զանց առնելի և զնեբհակսն պարտ վարկանիմ. զի և ոչ նուազ 'ի բարեպաշտութեանն ցոյց որ բարուոքն խորհին. և այս խմանել ըստ այնմ, եթէ Յաշխարհի ասա՝ նեղութիւն ունիցիք, և թէ Զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. և թէ, Զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն, և թէ, Աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց. Զի եթէ զտանուտէրն բէեղզեբուղ, բարեկամքն զինչ։ Վարդապետն՝ սամարացի և

դիւահար , զինչ և աշակերտքն . տէրն՝ Յովսեփայ որդի , և ոչ Աստուծոյ , ըստ շաբաթուն լուծման ծառայքն իմ համարեցին լինել ընդունակ : Քանզի թէ և բարեբարոյքն էին և հեզք , և ուղղութեանցն հետեւողք , մեծարէին և պատուէին . իսկ որք ծոյլքն էին և վատք և 'ի հետաւութեանցն 'ի վայր քարշեալք , առարկու իմն յառնէին : Քանզի զբարեձեւութեանցն տեսեալ հանդէս , ընդ խմաստայեղց բանս հանճարոյ՝ ոմանց յաչալանքն զօրանային ըստ 'ի բացեայ ինքեանց լինելոյն . քանզի բնաւորեալ է ախտ նախանձու առ պատուակիցս և համարուեստս միշտ բուսանել , ըստ որում որոմն յառուկ ցորենոյ : Իսկ կիսոցն բանականքն կսկծելի հաբուածք լինէին ըստ խղճայթեալ վիրացն մեղաց . մանաւանդ թէ յորս գտանէր երկիր արդաւանդ մշակն որոմնացան , զիւրն սերմանէր սերմ ատելութեան . և իբր զօրու՝ նոքօք յառնէր նմին ախոյեան : Զճշմարտութեանն քարոզ և խոստովանող

և զհամագոյութեանն գաւանող ըստ հին և նոր կտակարանաց և սրբոց հարցն աւանդից 'ի հերձուածոյ կարծիս դատէին. և զանձառ Բանին ընդ մարմնոյ միաւորութեանն գերագոյն և հրաշափառ նոր խառնմանն, և մի Որդի և տէր յերկուց բնութեանց լինելոյ բացայայտող և հրատարակիչ և յամենայն եկեղեցիս ուսուցիչ, իբր զերկաբնակ հայհոյէին. և որ առաքելական աւանդից և հեռեւողաց նոցին հեռեւող եկեղեցական բարեզարդ կարգօք և սահմանօք, իբր այլասանդ թշնամանէին:

Այլ որպէս ցուցաւ սկզբնաչալին էր այս պատերազմ որ ընդ ամենայն սուրբս մաքառի, թերեւս առ լուսանացն ջջուելոյ 'ի վհատութիւնս կործանեսցէ. իսկ քաջալարժն 'ի փորձութիւնս անպարտելի մնայր յայտնիկ իբրեւ ըզվէմ անշարժելի 'ի յափն ծովու, որ յարակոծ ալեացն դիպմանց միշտ հարկանիցի անյողդողդ կայանաւորեալ. այսպէս և անդրդուելի

վէմն եկեղեցւոյ 'ի բիւրապատիկ հայհոյական կոհակաց իբր զիմաստութեանն տուն մնայր անշարժելի, գիտելով զկռուակիցն և զօրինակ յաղթահարութեանն։ Վասն որոյ կայր համբերութեամբ և տեւէր ժուժկալութեամբ ամենայնի 'ի վերայ եկելոց փորձութեանցն, ոչ անգիտացեալ զպտուղն զոր կըթէր 'ի նմանէ զլուսաւորութիւն իշխանականին և զքաղցրութիւն ճաշակաց աստուածային սիրոյն։ Քանզի բնաւորեալ է ոգի՝ ըստ որում ասկի 'ի հրահալելիս մաքրի՝ 'ի փորձութեանցն պայծառանալ. որ և Ճեմականաց եղեւ բաղձալի, Զէւս ասելով տեղասցի 'ի մեզ փորձութիւն։

ԺԲ. Այսոքիկ քահանայապետին մեծի հանդէս, այս յառաջադիմութիւն և եւս քան զսոյն յոր անկարանայ բանս ձգտիլ իբր 'ի գերագոյնս Ճառելեաց։ Իսկ որ զինիս, զինչ։ Դանդաղի յառաջատումն բանս, 'ի կրկնակի վերայ կացեալ

շաւզաց , ոմն ձգէ , և միւսն ընկրկէ . ոմն ըստ բանիս ընթացից կարգի խիզախէ , և ոմն 'ի թշուառութիւն բնականապէս խուսափէ : Քանզի բնութեանս հարկ պահանջէ և նա- խախորհեալն անվրէպ ուղի յինքն ձգէ . մանաւանդ թէ յոքնամանա- կեայ բաղձանացն ընուն իղձք , որ և յարն աղաղակէր ընդ որս հեառ- ւէրն . Ե՛րբ ելկից երեւեցայց երե- սացդ Աստուծոյ , և Ցանկայ և փա- փագէ անձն իմ 'ի դաւիթս քո , և Ցանկամ ելանել 'ի մարմնոյ սատ և մոռանել առ Աստուած . և Ո՞ր եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ , տաղկամք ծանրացեալք . քանզի զբնակութիւնս երկնից փափագիմք զգենուլ . քանզի ոչ գիտեմք զերե- ւելիսս , այլ զանեբեւոյթսն . զի առժամանակեայ սա , և նա մշանջե- նաւոր :

Արդ եհաս որում ցանկայրն , ժամանեաց՝ որում փափագէրն , 'ի բաց դնելով ըղձիցն հանդիպել . քանզի ոչ անգիտանայր զառաջա- կայ կիսին կատարումն ըստ աս-

տուածային առ նա յայտնու-
թեանն. որպէս թէ ասել, Զբն-
թացան կատարեցեր, զհաւատն
պահեցեր, զթշնամին ընկրկեցեր,
զյաղթութեան նշան կանգնեցեր.
արդ երթագեա 'ի պսակն, ժամա-
նեա 'ի հանգիստն, փութա 'ի բրա-
բիոնն, ընկալ զյաղթանակն, ընդ-
գրկեա զմրցանակն: Այսմիկ երա-
գէա եղեալ անբերելի ընոյր խնդու-
թեամբ, և զգեստաւորեալ խոր-
հրդական զգեստու՝ զփրկագործն
մատուցանէր պատարագ և հաղոր-
դեալ կենարար և մեղսաքաւիչ
խորհրդոյն, յորմէ և ոչ երբէք 'ի
բաց եկաց, մեծ հաւատով և բա-
զում յուսով հանդերձ սիրով և
արտասուօք:

Յետ այնորիկ ապա յախտ ինչ
անկանէր հարկաւոր կրից աղցաւոր
բնութեանս. յառաջ կոչէր զեղ-
բարան, զնախաքարոզն սակաւուք
երկրորդէր, զնրատական և զյոր-
դորականն սիրելի որդւոցն աւան-
դէր, անփոխագրելի 'ի նոյն մնալ
հաստատէր. Սուրբ եմ յարենէ,

ասելով, ձեր ամենեցուն, զի ոչ խորշեցայ 'ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ. և արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի շնորհաց նորա. զամենայն ձեզ աւանդեալ աստուածային պատուիրանացն զգուշութեամբ պահեցէք, մշակ առանց ամօթոյ լինելոյ, և զհողս հողոյ առաք աղօթիւ յուղարկաւորութեամբ: Եւ ինքն զանկն 'ի վեր կարկառեալ՝ յորմէ ոչ երբէք խոնարհեալ ըստ ասելոյն, Աչք իմ յամենայն ժամ առ տէր են. յոգոց հանեալ պրտատուալից խնդութեամբ՝ 'ի Ձեռս քո, ասէր, Յիսուս աւանդեմ զհոգի իմ. ընկալ զհոգի քոյոյս 'ի Երուսաղէմ: Եւ խսկոյն փչէր զմաքրական հոգին զուարթ դիմօք, առ հարս իւր յաւելեալ, կենաց 'ի կեանս փոփոխմամբ:

Մեծ յաւելուած անդրանիկաց այսօր ընկալեալ եկեղեցի, այնքան յաճուն առաւելեալ, որքան 'ի խոնարհ ասա նուաղեալ: Քանզի ձգեցին յինքեանս սուրբքն զսուրբն.

արդարքն զարդարն , մարգարէքն զնախաձայնութեանցն մեկնիչ . ա-
ռաքեալքն զանձառ խորհրդոցն յայտնիչ . աւետարանիչքն զաւե-
տարանին քարոզ . քահանայապետքն զքահանայագործողն . քա-
հանայքն զմաքրիչն . հովիւքն՝ զհովուապետն . եպիսկոպոսքն՝ զայցե-
լուն . վկայքն զնմանողինակն . նահատակքն՝ զձգնողն , միանձունքն՝
զանապատականն . հանդիսաւորքն՝ զժուժկալն . կուսանքն՝ զանարատն .
և միանգամայն վերինքն՝ զ'ի ստորուստ երկնայինն :

Իսկ 'ի խոնարհ ասա , զի՞նչ : Անբերբելի սուգ միանգամայն որոց 'ի նմանէն մնացեալ սիրեալ բեմականաց և ստորակայից , և համօրէն ժողովրդոց . զի Մովսէս 'ի լերինն Թաղի . և Յեսու չէ 'ի միջի , որ զորդիսն նորոյս Իսրայելի յորդահոսան անցուցանելով ուղիս յերկիրն ածէ կաթին և մեղրոյ բղխիչ պարգեւաց : Եղիա հրեղէն վերանայ կառաք , և Եղիսէ ոչ աղաղակէ զկնի զապացոյց առեալ մեռելութեան ,

որով զյորձանուան բաժանէ ընդ-
հարմամբ, զանալոցագոյն բերմունք
կենցաղոյս։ Դաւիթ առ հարս յա-
ւելու. և Սաղոմոն ոչ 'ի պատրաս-
տեալ ոսկւոյն Կեփաղեայ զաս-
տուածաբնակն յարուցանէ կազ-
մած տաճարի։ Պաւղոս անփոփի, և
Տիմոթէոս ոչ զաւետարանին յա-
ջորդէ քարոզ, և այսր աղագաւ
թախիծ։ Զի մինչ հարսն յառա-
գաստի, փեսայն 'ի դամբարան հրա-
ւիրի. տակաւին մանկունք 'ի խրա-
խուութեանն, ողբերգական ժամա-
նեաց կոչումն։ Այդին 'ի ձեռանէ
տեառն անկեալ, գարնանաբեր սա-
ղարթիւք պճնեալ, 'ի բարձունս
զբարուանական արձակեալ, անմա-
հութեանն ծաղկաւ քաջաշնչեալ և
ոսկուզիւք բազմապատկօք վայելչա-
ցեալ՝ յանկարծօրէն ամպահարեալ
անփառունակ տգեղանայր։ Անդն
քաջաբեր 'ի մշակէն ժիր երկրա-
գործեալ, աստուածախօս վարդա-
պետութեան ցօղով զուարճացեալ.
և չեւ եւս սիրապէս առոքացեալ
խիւսոյ սերմանն՝ խորշակաւ մահուն

հարեալ, սին և ազազուն քաջաբե-
րի փոխան եղեալ։ Ոչխարքն բանա-
ւորք երկուորածինք և լուացեալք
որք 'ի շուշանս Ճարակեալք յա-
ղօտս կենդանիս և 'ի դալար վայրս
անեալք, զանցեալք զմահացուաւն
և յապրեցուցանողն առաջնոր-
դեալք, 'ի հարկանել հովուապե-
տին ցրուեցան, ըստ մարգարէին,
եբրեւ զոչխարս որոց ոչ ի՝ցէ հովիւ։

Տիսուր ատոանօր եկեղեցւոյ ցու-
ցանիւր հանդէս. զի որ զբաղմա-
ժողովն հրաշացուցանէր փրկական
անօրէնութեան մարդացելոյն վան
մեր ոսնական զյիշատակն, որով
'ի նոյն պատկեր փառաց 'ի փառս
նորոգեալ վերստին արծարծմամբ
փրկականացն, զի ոչ 'ի միջի նոցա
որ այնոցիկ այր գտանէր յարդա-
ւիչ։ Ոչ և որով որդիքն սիրելի ե-
կեղեցւոյ արգասիք հանդիսաւո-
ւացն, որք զանձինս իւրեանց ե-
տուն 'ի մահ, ընդ որ 'ի վերայ նո-
ցայն մեռաւ և յարեաւ՝ զինքեանս
կերպարանէին առաքինութեան
հիւսիցն յեռմամբ, զի վկայակիցն

կենդանի ոչ ըղձակերտ տեսողացն զպատկաւորացն հրաշացուցանէր զԻշատակս։ Նա և որ առաջնոյ լրումն ուխտին մեծն և սխրալի մերոյ փրկութեան խորհուրդ փրկագործ կրից երկրորդն Ադամայ առ մեզ զեկուցումն, որ ինքն զհաւատով հպեալսն ընդունի և բնակէ անմահն առնելով կենաց ժառանգորդ զպատուողն՝ և մերձաւոր և առ ամենեսեան նորին զօրութեան և փրկութեանն հրապարակող, քահանայագործող և խորհրդածու ոչ ունելով, որով 'ի խորհուրդ վասն որոց բաշխէրն՝ գայլն, թերեւս ոչ զվրիպումն հեշտեաւ ընդունակացն բերէր։

Զի՞նչ եւս զհեատեղոցն և որք վեհերոտաքն են որ ասիցէ զտուգանս յայնպիսւոյ ընդոստուցիչ և կսկծողական խթանէ խմաստայեղձն պակասեալ բանից. որով՝ ոարսաւիելն Յիշատակաւ տապարին հատման և հրածախն դատման զարթուցանէր զթմրեալսն յերկրաւոր սիրոյ 'ի ըզմայլումն աստուածային խառնեալ

իմաստութեանն խառնարանի։ Եւ կամ զպնդակազմիցն և զառաքինեաց եթէ յորքանեաց արքայութեանն սիրով յառաջատուութենէ նուաղեցին լաւագունից ընտրողութեանց՝ 'ի նորա բացակայել յորդորական բանից։ Ո՞չ և բազմայանցիցն, և որ 'ի խօրս ըմբռնեալ չարեաց գիցի հառաչ, զվերականգնողն և զյարուցիչն 'ի գլորմանէ չունելով մեղաց և զառաջնորդն անմոլար 'ի շաւիղս արդարութեան։ Թողութիւն և զհայրն որբոց և զայցելուն այրեաց, և զընդ ամենայնի ամենայն եղեալն գթածօրէն, զի զամենեսեան շահեսցի. ոչ ապա պատկան սգոյն տարածումն։ Այլ թէ և այս այսպէս, սակայն զօրինաւոր գործ վճարէին, տաղմոսիւք և քահանայական օրհնութեամբ 'ի հանգիստս յուղարկէին, զԵրրորդութեանն անձնականօք մաքրութեամբ տաճարացեալն 'ի տաճարին տեառն մեծափառ պատուով 'ի դամբարանի դնէին, զսուրբն 'ի սրբարան սրբոց հանդուցանէին. և զյիշատակն ամ

յամէ յեօթնեւորդուն ամենեանն ըստ հռոմէականին 'ի չորեքտասանն օր աւանդէին։

Եւ արդ եկայք ինձ մերձ կացէք 'ի գովութիւն ամենայն սպասաւորք բեմքին, միանգամայն և սաղմոսակայք, 'ի կշիռ զօրութեան ըստ յարմարն պատշաճիւ ամենեքեան վերապատուեցէք, ոչ զի նորա յաւելուած պատուոյ առնիցէք, քանզի ո՞ր առաւելութիւն փառաց նորա յայսմանէ, որ բոլորովին զամենայն արհամարհեաց զմարդկան փառս. այլ զի զանձինս բարեգործիցէք 'ի նախանձ առաքինութեան յորդորելով. որք մեծի խորհրդոյն էք քահանայագործողք, մանրագունից զարդ՝ զքահանայապետն. սարկաւագունքն՝ զնորհաբաշխն, դպիրք՝ զնուիրիչն, ժառանգորդք զժառանգաւորն։ Կրօնաւորք զկրօնիցն յարդարիչ. միանձունք՝ զանապատաւորն. ուխտաւորք զուխտիցն աւանդողն. իշխանք զօրէնսն. որք ընդ իշխանութեամբ, զհնազանդութիւնն։ Դատաւորք զիրաւունս.

դատեցեալք՝ զուղղութիւնն. մեծատունք՝ զանձն. աղքատք՝ ըզհամբերութիւնն. փարթամք զմատակարարն. անանկք՝ զժուժկալութիւնն. բարեգործք զյորդորիչն. եղեռնագործք զնահանջիչն. ճշմարիտք՝ զաւանդիչն. սուտք՝ զարձանացուցիչն. ամբարտաւանք՝ զխոնարհեցուցիչն. չափաւորք՝ զբարձրացուցիչն. կեղծաւորք՝ զպարզութիւնն. պարզք զմիտեսակարարն. սատակք՝ զկա * . . . հնազանդք ըզհաւանութիւնն. ծոյլք՝ զարիացուցիչն. փոյթք զպնդութիւնն. սրբամտողք զհանդարտութիւնն. հեզք՝ զնաղաղարարն. խռովարարք զհաշտութիւնն. խաղաղարարք՝ զանպատերազմականն. վաւաշոտք՝ զողջախոհութիւնն. ողջախոհք ըզպահպանութիւնն. ատեցողք զսիրելութիւնն. սիրողք՝ զնմանօրինակն. որովայնամոլք զպարկեշտութիւնն. պարկեշտք զձօնիչն. յաջաղկոտք զբարեմտութիւնն. ան-

* Ցօրինական ատա և զկնի թերատ գտանին բառք հինգ։

նախանձք՝ զհաւատարաչափն. հեշ-
տասէրք զընդոստուցիչն. պնդա-
կամք զունակութիւնն. հաստա-
տունք զանշարժութիւնն. յող-
դողք զկապդուրեցուցիչն. ան-
կեալք, զյարուցիչն. կայունք ըզ-
հաստատութիւնն. մոլորեալք՝ ըզ-
դարձուցիչն. անսաեր իւրք, զնոյնու-
թիւնն. մաքուրք՝ զսրբութիւնն. ախ-
տաժէտք զառողջութիւնն. կոյսք,
զանախտութիւնն. ամրացեալք՝ ըզ-
ջաւին. մեղաւորք զարդարացուցիչն.
որք յարդարութեան՝ զպսակիչն.
զյուսոյն հաստատութիւն, որք
յուսահատք էք. և զկայու�, որք
յանեռկեայութեանն. որք, ըզ-
հայրն. և այրիք զվերակացուն. ման-
կունք զդաստիարակն. և տղայք
զսնուցիչն. երիտասարդք զկապն.
ծերք զհամեստութիւնն. աշա-
կերտք զվարդապետն. վարդապետք
զկատարելագործն. խմաստունք ըզ-
խոհեմն. և հանճարեղք՝ զհմտա-
ցուցիչն. արք՝ զբարեպաշտու-
թիւնն. և կանայք զցածութիւնն.
և բոլորովին ամենեքին, զամենայն-
ընդ ամենայնի եղեալն։

ԺԳ. Ներսէս մարդ երկնային, և հրեշտակ երկրային, 'ի մարմնի խոնարհութեանն աղցաւոր վիճակեալ կրից, զբարեբաստից և զերջանկաց 'ի միջոտ բարեաց զմաքրութիւն անախտութեանն ըստ անկարօտն բնութեան, զեր 'ի վերոյ յոքունց հոմասեռից ապաւորեալ բերէր։ Դրախտ աստուածատուն կ, յոքնազան առաքինութեանցն ամենեքեան զուարճացեալ, զբազմատեսակ ծաղկանց և պտղոց, հոտոց և համոց որակութիւնս անձնականս, և ընդդիմակն մասանց մշակին երկնաւոր հատուցանէր զարդիւնս շահեկանութեան։ Ներսէս աղբիւր յորդահոսան 'ի տանէ տեառն բղխեալ. զվիճակեալ տեառն շնորհի զեկեղեցւոյ բանաւոր տունկս քառասաժ վտակօք հանրապէս արբուցանել յաճուումն պտղաբերութեան։ Այլ և ըստ նախաձայն հոգեւորդողին զգնացս ուղղեալ ուղղեց 'ի քաղաքն աստուածային, որով և յարկք սրբեալ ասին։ 'Ներսէս' քահանայ

ինքնանուէր դերագոյն ահարոնեան քահանայութեանն, որ ոչ անբաւնից արեամբ ցլուցն և նոխազաց, այլ անձնականօք մաքուր ղենլեօք զքահանայութեանն լնոյր պաշտօն 'ի ներքս յանմատնելին՝ եղեալ Երեսացն Հօր յանդիման, զինքեամբ մատուցելոցն քահանայագործէր զփրկութիւնն։ Ներսէս՝ զօրավար առաքինի դումարելոց 'ի հանդիսի ընդդիմամարտ զօրութեանն եկեղեցւոյ մանկանց՝ մարդոդական բանիւ յարուցանող զյառաջամուութիւն, ածելով և հանելով հանճարօրէն 'ի Ճակատուն, զներ հակն պարտեալ, զանձն և ոչք ընդ ձեռամբ ապրեցուցանէր։ Ներսէս ըմբիշ բարեպաշտութեանն, ըստ օրինի մենամարտեալ յասպարիզի, ընդվզեալ ապստամբին, որ ոչ յանդոյն ինքր թէ զոգ կոծելով զձեռս ածէր. այլ ճնշմամբ և հնազանդեցուցանելով իրաւ... զմարմին, ըզկարեւորն հարկանէր հակառակին զանդամս կարելէր խոցմամբ ազդողական տալով զվէրս։

Ներսէս, հանճարեղ նաւապետ, 'ի ձմեռնացեալ աշխարհական ծովուս մակուկաւ իմաստութեան և հոգւոյն թեւօք նաւապետեալ, զեկեղեցւոյ լուսն անթաց ընթացիւք 'ի բոլորն վերայարուցմանց փորձութեանցն արկածից անվրդովանցուցեալ յանքոյթն հասուցանէր նաւահանգիստ։ Ներսէս, վաճառականն իմաստուն 'ի խնդիր գերաբուն և պատուական եղեալ մարգարտի, համանգամայն որ զինչ և ունէր մեծութիւնն և զփառս և զհեշտութիւն կենցաղոյս իբր անարգ ընդ պատուականի, և լուծական ընդ որ ոչն ցնդի փոխանակեալ զվինն զայն, և յարաժամ ունող նոյնաբար սեպհականեալ ստացուած։ Ներսէս, ուղեգնաց զգուշաւոր 'ի ստերիւր և այլթաքող լպրծահաս և կաւակո.... գարշապարաց ուղղոյն հետոց, որ լայն և ընդարձակ շաւղաք յանգնդատոյտ խորատուղեալ դժոխայինն ի՛ջուցանէ։ յատակս, բացադարձեալ ընդ նեղ և ընդ նուրբ անցս վերին ուղղոյն ան-

մոլար Ճանապարհորդեալ ընդ արձակն Ժամանեաց տեղի հանդիսատեան։ Ներսէս, Ճարտարապետ խոհեմ նորոյս տաճարի, լցեալ հոգւով խմաստութեան, քան ըզբեսելիել յարդարիչ հինն խորանի զքառերանդ նիւթս զարդու արքունեան Ճեմարանիս զիշխանական նին առեմ մատուռնս՝ ընդ պատուական ոսկւոյ թագաւորականն ոպի, և մաքրեալ բանի արծաթահանգէտ փոյլման յեռեալ, այլ և ոչ բացընկեցիկ որ 'ի Ժահահոան և 'ի վառման հրոյ նիւթոց այլայլելով 'ի յէութեան պատուականին. ըստ որում և որ այսորիկն էր շինիչ նշանակէր, զբոլորն հաւաքեալ 'ի միութիւն յարմարութեանն ատուածաբնակ այս տաճարի, յորում և տէր 'ի սմա յայտնի ըստ հոգեներաւադն մատեանի։ Ներսէս, որսորդ հնարիմաց, ըստ ասողին, Առաքեցիկ որսորդս՝ և որսայցեն 'ի վերայ լերանց, և կայցուք աղուեսունս փոքրունս՝ զոսպականիչս այգեաց, որ և գիտէր յամենայն ուրեք 'ի լերինս

և յանապատս զանանանացեալսն 'ի բարեաց ամենայն զգուշութեամբ, զի մի զնովաւ անց . . . : Զինու այս միկ վարելով որով 'ի փրկութիւն ապրեցելոցն երեւէր, յամբարտաւանին նեռաձիգ լինելով գլուխ, զնոյն յարեան արբուցանելով զաւարն դարձուցանէր : Ներսէս, ոչ խար բանաւոր երկնաւոր հովուապետին, որ զմիոյն նուազեալ 'ի կատարեալն թուոյ՝ յանապատ թողու յերկիրս, և զմոլորելոյն զհետ գնայ անդրէն դարձուցանելով 'ի հրճուանս մնացելոցն. զորոյ զձայն ճանաչէ և զհետ երթայ 'ի յօտարացն խոտորմամբ՝ ընդ նորայն մնալ նելով դուռն յապականիչ գողոյն ամրացեալ : Ներսէս, հովիւ քաջ բանաւոր հօտի, 'ի յարդարեւ հովուապետէն յանձնեալ, նայասէս զանձն 'ի վերայ դնելով հօտին զմոլորեալսն դարձուցանել, զբեկեալսն պատել, զմարմաւոան առողջացուցանելով, և զեկեղեցականն ամրացուցանելով փարախս. քանզի գիտէր ոչ միայն ընդ անձին, այլ և ընդ

ժողովրդեանն տալ համար։ Ներ-
սէս, երկիր բերրի և արգաւանդ,
ընկալեալ զսերմն բարի յանխտիր
սերմանողէն, զգուշանայր 'ի թըռչ-
նոյն 'ի խոր արկանելով, և տապոյն
հիւթով կենդանական և միանգա-
մայն 'ի հեղձուցիչն փշոց տայր
զպտուղս արդիւնական սերմանո-
ղին, ընդ միոյ հարեւր, վաթսուն և
երեսուն։ Ներսէս, մշակ աշխա-
տեալ յանգաստանի տանուտեառն
զկորդացեալ երկիր բանականի բնու-
թեան արօրով բանի պատառեալ,
և զանտառամոլ ճիւաղակար որոմն
խլեալ, զբարւոքն սերմանեալ, և ոչ
նիրհեալ 'ի քուն թանձրութեան,
զի մի եկեալ թշնամին զորոմն
ցարուեսցէ սերմանեացն 'ի վերայ,
այլ արթնութեամբ զգաստացեալ
'ի պահպանութեանն անգրժելի
մնալ անդոյն։ Ներսէս, այգե-
գործ ժիր և արթուն, զտունկս
յամենազօր աջոյն տնկեալ տածէր
և դարմանէր յատուցաւ տպառնա-
կան և կսկծեցուցիչն բանի զաւե-
լորդս ցարեացն և յոքնաբեղուն

չարութեան՝ զանբերս առաքինութեան զուղէշն յապաւէր և ըզպտղաձինան մաքրէր. վիանգամայն և ցանկով ասուածային օրինացն յապահանագործ և ժանտացուցիչ գաղանէն ամրացուցանէր։ Ներսէս՝ բժիշկ Ճարտար անձնուիրան հասակի լուութեանն յեկեղեցւոյ զկուրացեալսն 'ի Ճշմարիտ արփւոյն հայեցողութենէ լուսաւորէր, ըզկաղացեալսն 'ի շաւղոց նեղ և անձուկ Ճանապարհին բժշկէր, զկուլացեալսն 'ի կենսունակ լոյս ասուածային պատուիրանին բանայր, ըզհամրացեալսն 'ի փառասիրութենէ օրհնաբանեալն արարչի՝ արձակէր, զդօսացեալսն 'ի բարեգործութեանն ձեռնաձիգս առ լաւութիւն պատրաստէր. զառ 'ի Ճշմարիտն հաւատոյ դաւանութենէ ակարացեալս, 'ի վերայ անշարժելի հիման հաստատէր, և որ բոլորովին լուծեալ անդամոք ըստ հոգեւորական լինէր հասակին և զմահիձան բառնալ հրամայէր։ Ներսէս, վարդապետ Ճշմարտութեան հին և նոր

կատարանաց, զնորին խորհուրդս անձառելեացն բանից բացայայտէր. և որք միանգամ ասկրուա և անուաեալի կարծրութեամբ գեղահատակացն գոլով, առատամբք մեկնողութեանն ծաքելով գիւրընկալ առնէր, յիմանալի որոնս մատուորական խուզմանն յաճուումն հոգեւորական պատրաստէր։

Ներսէս, անտես հաւատարիմ 'ի վերայ գերդաստանի կացեալ մեծի ալբայրին կրկին աւանդիւք, որ ոչ զծառայակիցն ըստ անզգամին հարնէր զհոգի, և կամ որք ընդ ձեռամբ անյուսացեալ զտեառնն գալուստ, այլ մեծաւ սպասեալ արթնութեամբ գալստեան թագաւորին, առլով 'ի ժամու ծառայակցացն զկերակուր. որով 'ի նմանէ զերանաւէտն լուեալ ձայն, Ի վերայ ամենայն ընչից իմոց կացուցի զքեզ։ Ներսէս գոլիր աշակերտեալ ալբայութեանն, յանծախելեաց առատութեանն իմաստութեանն գանձուց փարթամացեալ 'ի դէպ ժամանակի առատաձիր ճոխանայն

զ . . . բաշխելով զոսկին և զարծաթ և զքարինս պատուականս՝ որք այնոցիկ են ցանկացեալք 'ի հին և 'ի նոր կտակարանացն : Ներսէս, ասնող ասնից տէրունականաց և պայծառաւորիչ յիշատակաց որդւոց վերին առաքեալին, բազմահամբաւ պատրաստութեամբ ըստ իմանալի մտաց փայլման 'ի տեսակս ըզգայական լուցմամբ լապտերաց յաճախութեան և բուրմամբ խնկոց անուշահոտութեան, որով և առ յիմաստս մտաւորական տեսութեանց ըստ իմանալին դիտմանց տակաւին զոլայացեալն զարթուցանէր 'ի նմանն կոյս վերաբերիլ : Ներսէս սուսեր հատողական ազդող բանիւք աստուածական, որ անցանէ քան զորոշումն շնչոյ և ոգւոյ, յօդից և ուղղոց՝ 'ի մարմնոյ եկեղեցւոյ զախտացեալն անբուժելի 'ի բաց հատանելով զանգամ. զի մի փոքուն խառնուած ապականագործ խմորոյ զբովանգակն ժանտացուցէ մարմին :

Ներսէս, հայր որբոց և այցելու այրեաց, յանձանձելով և խնամե-

լով ըստ խրատքանչիւր պիտոյից
զքաղցն կերակրէր, զմերկն զգե-
ցուցանէր, զզղջուեալն սիրէր,
զտկարն պաշտպանէր, զրկեալսն
օժանդակէր, զորբն սնուցանէր,
զայրիս պատսպարէր, և յառ-
ձեռնպատրաստ վասանգից մխիթա-
րէր։ Ներսէս, խոնարհ անուշահոտ
յիմանալի խնկեալ խորանի բուրվա-
ռաք ոսկեղինաք ժուժկալութեանն և
մաքրութեան երկասիրութեամբն
աղացմամբ քառանիւթեայն առնե-
լով խառնուած հաճոյական զիսո-
հականին և զօրութեան, զողջախո-
հութեան և զարդարութեան։ Ներ-
սէս, աղ անհամելոց, և ջարաչար
կեղաք նեխելոց բիւրապատիկ ախ-
տիւք յոգիս հարելոց, որովք զան-
ախտութեանն կորուսին զ . . . և
զմաքրութեանն առողջութեան վե-
ըրատին զարբութեանն տալով զհա-
մեղութիւնն և զնեխութեանն պըն-
դութեան։ Ներսէս աշտարակ ան-
պարտելի հակառակին զօրու պա-
տերազմողի, յոր 'ի ձախողն և ոլք
. . . մարտ անընդմբառնելի ընդդիմա-

մարմին զբաղմանէիդ տեղացմունս նեռից և ռմբաքարաց իբր յամուր մեքենայէ 'ի բաց դարձուցեալ։ Ներսէս վէմ անշարժելի 'ի հիմունս եդեալ Սիոնի և 'ի վերայ անդըրդուելի դաւանութեանն Ճշմարիտ հաւատով հաստատեալ զեկեղեցի, զդժոխային անհաւատութեան մըտից յար կացեալ անյաղթելի։ Ներսէս, տաճար պանծալի կազմեալ և յարդարեալ 'ի պատուական նուիրեանէ սրբութեան թագաւորին փառաց, յորում բնակէ Միածին ընդ ինքեան ածելով զՀայր և զՀոգին, ըստ այնմ, թէ Ես և Հայր առնա եկեսցուք, և օթեւանս առնումա արասցուք։ և թէ Տաճար Աստուծոյ կենդանւոյ էք և որպէս ասաց Աստուած թէ բնակեցայց և գնացից 'ի նոսա։

Ներսէս, կառավար խմաստուն և արի՝ 'ի կառս պատուիրանի լծեալ զոգի և զմարմին ինքեանց զօրութեամբ մաստամբ և զգայութեամբ իշխանականին 'ի վերայ եղով մտաց և զերասանական 'ի ձեռին ունելով

զօրեղասլէս կառավարեալ 'ի վերայ
ոչխասեռիցն խմբից, որ ընդ նոսին
միշտ կռուին ախտից առաքուր
հարկանելով, և ընդ ասպարիզին
անվնաս անցուցանելով հանդէս՝ 'ի
մրցանակն ժամանեաց պատրաստե-
լով հանդիսադրին։ Ներսէս, ուռ-
կան անխզելի 'ի խորս արկեալ աշ-
խարհական այս ծովու, զբանական
ձկունս 'ի տրմային և հեղձուցիչ
հեշտութեանց վերաբերեալ 'ի մա-
հուանէ 'ի կեանս առնէ փոխա-
դրութիւն։ Ներսէս դշխոյ սան-
ծալի արքային անմահի, մոռացեալ
զժողովուրդ և զտուն հօր, 'ի հան-
դերձս յոսկեհուռն զարդարեալ և
պաճուճեալ և ածեալ 'ի տաճար
թագաւորին՝ որում և տենչային
գեղոյ վայելչութեանն։ Ներսէս
փեսաւէր և նուիրող հարսին եկե-
ղեցւոյ, նախանձեցուցանելով 'ի
նախանձ աստուածային, և խօսե-
լով զկոյս սուրբ մաքուր փեսային
դեղապանծ վայելչութեամբ, որ
էտ զանձն իւր վասն նորա, զի զնա
սրբեսցէ սրբութեամբ աւազանին

յառաջին հեշտութեանցն ազատ-
զութեանց։ Ներսէս, փող աս-
տուածային քաջահնչող և համա-
լուր, զանձառ խորհուրդ տնօրէնու-
թեանն փրկային եկեղեցւոյ յընդ-
հանուրս հնչելով զամենեսեան 'ի
խրախուն հոգեւոր զնախահրաւի-
րեալսն կոչէ սեղանոյն պատրաս-
տելով և իմաստութեան խառնարա-
նին, Եկայք, ասէ, կերայք 'ի հա-
ցէս, և արբէք զգինիս, թողէք զան-
զգամութիւն և կեցջիք. ինդրեցէք
զիմաստութիւն, զի ապրեսջիք։
Ներսէս, ջահ համապայծառ, զԵր-
րորդութեանն համաբուն լուսոյն
գիտութիւնն յոգի ծա... հեղու-
թիւն որ անկելոցն է բարձրութիւն
անպատճառ ընտրեր, և զկիսոց
զանոխակալութիւն և զանյիշաչա-
լութիւնն յանձին գաղափարեր։

Ոմանց մարդասիրութեան և ո-
ղորմածութեան, որ ամենեցունց
գթասիրի ածէ հօրն կերպարան՝
նմանել փութայր. և զայլոց զան-
ախտութեան և զանստացուածու-
թեանն բարիս յինքն հաւաքեր։

Զոմանց զժուժկալութեան և ըզ-
համբերութեանն 'ի բազմապատիկ
վիշտս և 'ի նեղութիւնս՝ զքաջու-
թիւն բերէր. և այլոց ողջախոհու-
թեան և պարկեշտութեան լինէր
հետեւող։ Ոմանց մշտահայց և բազ-
կատարած մաղթանօք անընդմիջա-
բար աստուածխօսութեամբ գայր
'ի հաւատարութիւն, և կիսոց զան-
նախանձ և զանյաչալն առնէր 'ի լը-
ծակցութիւն. զոմանց հաւատարա-
չաւոր անկարօտութեան, վեհիցն
արթնութեան բերէր նշանակ, և
յայլոց զգաստութեանց և մաքրու-
թեանց ոչ լինէր վերջացեալ. ի-
մաստութեամբ և խոհականու-
թեամբ՝ որ դերագոյնքն էին յայտո-
սիկ կշռէր, և որ յարութեանն էին
քաջակիրթք՝ նախանձու վառէր. որ
զուշադրութիւն անուսի կենցաղոյս
ընդ ոսիւք եդեալ՝ նոցին հետեւէր.
և որք 'ի վերինն անխոտորնաբար
երկնային ուղին գնային, կցորդէր.
որոց սեպհական էր ժառանգու-
թիւն բարեպաշտութեան աւանդ՝
ձայնակցէր. և որք զսիրոյն ունէին

օրէնս 'ի յաշակերտի կարգ զինքն դնէր. և միանգամայն որ ըստ բա-
ռեզարդ կարգաց իմանի, ըստ չափոյ
զօրութեան՝ 'ի նմանութիւնն կամ
'ի հաւասարութիւն, և կամ 'ի գե-
ղադրութիւն ձգտել յօժարէր։

Ընդ արդարան մաքրեցաւ, ընդ
տեսանողն նախաձայնեաց, ընդ
առաքեալն քարոզեաց, ընդ հայ-
բասպետն հովուեաց, ընդ վարդա-
պետն ասաուածաբանեաց, ընդ
վկայն յօժարութեամբ վկայեաց,
ընդ մարտիրոսն ջարչարեցաւ, ընդ
կուսանն նահատակեցաւ, ընդ
միանձունն ճգնեցաւ։ Վասն զի
լուաւ 'ի կոչողին ձայնէ, զի ասէր.
Որ ոք իմ առաջին կամի լինել աշա-
կերտ, ուրացի զանձն և բարձցէ
զխաչն և եկեսցէ զհետ իմ. և այնու-
հետեւ զբոլորն առաժեալով զիւրան
և ոչք իւրոցն 'ի ծանրութեանց ա-
զատեալ՝ թեթեւաբար ջարչարա-
նացն բեւեռամամբ կոչողին հետե-
ւեցաւ։ Եգիտ յաղարակի ասաուա-
ծային գրոց զանկապուտ գանձ պա-
տուիրանին, և զամենայն որ ինչ ու-

նէր վաճառելով զնա արարեալ սաացուած սեփհական, որով ճոխացեալ զաղքատացեալսն 'ի կենացն փարթամացուցանէր գանձուց։ Վասակեաց յայգի պատուիրանին, ոչ յերկրորդումն և կամ 'ի կրկինս՝ յերեքկինս և կամ 'ի մեռասանն, այլ զօրն ցերեկ զծանրութիւնն բարձեալ և զտապ, ոչ յաչալէր զպատկերին ամիպ զուգութեամբ հուսատարաբաշխ տանուտեառնն, և որ 'ի մեռասանն շնորհել ժամու, այլ և յարգէր զհաւատարութիւն առատապարգեւն ձրիոց՝ որ գիտէ զյօժարութիւն 'ի վասակոց դնել կշիռ։ Էառ զտաղանդ պատուիրանին և զշնորհացն ձիրս 'ի յանխափրն ամուռոզէ, և ոչ ծրարեալ անգործութեամբ յերկրի բնութեան թաքուցանէր. այլ 'ի սեղանաւորս արկանէր աւանդելով պահանջողին, և զշահն բերելով քառաթուի կրկնակաց և 'ի հնգից թիւ կատարուն. որով զաղնիւն զբարի որ իւր յատուկ է սեփհական 'ի տեառնէն լուեալ կոչումն

որ 'ի նեղքոյ զուարճութեանն, 'ի
քաջաղարմ ասնուատեառնէն հրա-
ւիրեցաւ 'ի հարսանիսն. և ոչ 'ի
փառասաքանութեանց զգայնոց ը-
ծակցութիւնս, և ոչ ընդ հեշտու-
թեանցն կապեցաւ նորահարսին, և
ոչ 'ի ստացուածոցս ադարակի պա-
տաղեցաւ, այլ պայծառս և փաղ-
փուռնս պատրաստեաց զգեստս հար-
սանեաց, որով յընթրիսն հոգեւոր
ընդ բաղմականսն գահակցեալ,
պաշտի յորմէ պաշտեացն ըստ ան-
շուշան խոստման. Գօսի ընդ մէջ
ածցէ և բաղմեցուցէ, և անցեալ
պաշտեսցէ զնոսա: Երեւեցաւ ար-
դարութեամբ երեսացն ատուա-
ծային 'ի լուսոյն զմայլեալ փառաց՝
Ճշմարտութիւն առաջնորդեալ լու-
սոյ, 'ի լեառն եկ արբութեան 'ի
յարկսն առաջի ատուածային մը-
տեալ սեղանոյ յանյաջորդն ծերու-
թեան զուարճանալով 'ի մանկու-
թիւն: Սպասեաց արթնութեամբ
տեառն գալստեան իբր զանգիտու-
թիւն լուսաւ ժամուն և ոչ զառաջին
զմիջին, և կամ զվերջին փութոյն

ընտրէր զժամ, այլ զբնաւ միան-
գամայն նիւթականի կենացս սահ-
մանն՝ լուսագունին ընտրութեամբ և
սատանալոյ տրոհէր ժամանակ։

Զկուսութեանն մաքուր սատցաւ
զլապտեր, ոչ 'ի գթութեան և 'ի
սիրոյ նուազեալ իւղոյ, որով և 'ի
նսեմն ժամու՝ փայլակնացայտ և
հրախաղաց գալստեանն յամեցելոյ
փեսային ընդ առագաստին 'ի ներքս
լինէր մանկանց անաղօտ լուցմամբ
լապտերին, ընդ լուսերամիցն բաղ-
միլ 'ի հարսնարանին. յորում զան-
յաջորդն նուազութեան սեղանա-
ւորէ լիութեան սեղան իմանա-
լեացն կերակրոց, և յիմաստու-
թեանն արբուցանէ խառնարանէ
այնմ արժանացելոց։ Որոյ գինի՝
հոգւոյն բոլխումն, և ողկոյզ՝ որ 'ի
խաչին ճմլեալ, և մշակ՝ երկնաւորն
հայր. որոյ արբումն զանձառն ծա-
նուցանէ իմաստ և զծածկեալն
յայտնէ խորհուրդ, զոր ոչ ակն
նկատեաց և ոչ ունկն լուաւ և սիրտ
իմանող ոչ եղեւ հասու։ Քանզի
զի՞նչ անդ հրճուեցելոցն զուար-

ՀՈՒԹԻՒՆ, ԵԹԷ ՈՉ ԶԱՆՀԱՌ ԻՄԱՍ-
ՏՆ ՓԻԵԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԵԼ ԵՒ ՆՈ-
ՅԱ ՈՒԱՆԵԼ. ԶՈՐ ԿԵՐԱԿՈՒՐ ԻՄԱ-
ՆԱԼԻ ԿՈՉԷ ՅԱՍԵԼՆ. ՈՒՏԻՑԷՔ ԵՒ ԸՄ-
ՊԻՑԷՔ ԸՆԴ ԻՍ 'Ի ՍԵՂԱՆ ԻՄ ՅԱՐՔԱՅ-
ՈՒԹԵԱՆ ՀՕՐ ԻՄՈՅ. ԶՈՐ ՀԱՇԱԿՈՂՆ
ԾԱՅՐԻՒ ՄԱՍԻՆ՝ ԴՐԱԽԱՄԻՆ ՔԱՂԱՔԱ-
ՑԻ ԵՒ ԱՆՀԱՌԻՑՆ ԼՍՈՂ՝ ԱՂԱՂԱԿԷՐ,
ԱՅԺՄ ՏԵՍԱՆԵՄՔ ԻԲՐԵՒ ԸՆԴ ՀԱՅԵ-
ԼԻ ՕՐԻՆԱԿԱՒ, ԱՅԼ ՅԱՅՆԺԱՄ ԴԷՄ
ՅԱՆԴԻՄԱՆ. ԱՅԺՄ ԽԵԼԱՄՈՒԱ ԵՄ
ՓՈՔՐ 'Ի ՀԱՍԱԿ, ԱՅԼ ՅԱՅՆԺԱՄ ԳԻ-
ՏԱՑԻՑ ՈՐՊԷՍ ԵՒ ՆԱՅՆ ԾԱՆԵԱՒ ՁԻՍ-
ՆԱ ԵՒ ԸՍԱ 'Ի ՎԵՐՈՒԱՆՆ ՈՐՈՄԱՆՆ
ՍՔԱՆՉԵԼԻՆ ԲԱՐԲԱՌՈՅ՝ ԵԹԷ ԳԻ-
ՏԵՄՔ, ՁԻ ՅՈՐԺԱՄ ՆԱ ՅԱՅՏՆԵՑԻ՝
ՆՄԱՆ ՆՄԱ ԼԻՆԵԼՈՅ ԵՄՔ. ՁԻ ՏԵՍԱ-
ՆԵԼՈՅ ԵՄՔ ՁԻՆԱ՝ ՈՐՊԷՍ ԵՒ ԷՆ:

ԱՍԱՆԻՍ ՈՐՊԷՍ ԾՈՎԱԿԱՆ ԱԼԻՔ
ՁԱՆԿՇԻՌ ՄԵԾԱՆՁՆՈՒԹԵԱՄԲ ՎԻՄԻ
ԿՑԵԼՈՅ ԸՆԴՀԱՐԿԱՆԵԼՈՎ ԶԱՓԻԱՄԲՆ՝
ՅԵՍՍ ՆԱՀԱՆՉԻ, ԱՆԿԱՐՑԵԱԼ ԸՁ-
ՎԻԹԽԱՐԵԱՒ ՁԱՆՑԱՆԵԼ ԼԵՐԱՄԲ. Ի-
ՐԱՒԱՊԷՍ ԵՒ ՄԵՐՍ ԱՌՑԷ ՁԿԱՅ, ԽՈՒՆ
ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԱԼԻՔ ՅԱՆԿԷԱՆ ԵՒ
ԱՆՈԼՈՐԱ ԵՒ ՈՐ ԴԵՐ 'Ի ՎԵՐ ՈՒՆԻ ՔԱ-

նակի և սահմանի իր և անուն և տե-
ղի հասեալ, որ անհասն է մոտաց և
անձառ բանի հանուրց սեռից բա-
նականաց։ Այլ ով գու յայսոսիկ
կայուն և անլուծական, և որ միշտ
նոյնպէս ունիս անձառելի բարի
հուպ և մերձաւոր և անընդմիջա-
բար 'ի նոյն վայելող, հայր սուրբ և
քահանայապետ, ընկալ սիրողա-
պէս և անարգամեծար կամաք զերա-
խայրիս իմոյ կալոյ և հնձանի, թէ
և յոյժ 'ի վերջին յարժանաւորու-
թենէ քումդ փառաց ընդունակու-
թեանն շատմարանի, այլ ոչ պա-
տուականագոյն քան զայս 'ի բանա-
կան իմում անդ։ Եւ վասն տօնո-
ղացն զփառաւոր օր յիշատակի վե-
րսափոխման քոյ 'ի տարնայնոցս
յերկնայինսդ, 'ի զգալեացս յիմա-
նալիսդ, յերկրաւորացս եկեղեցւոյ՝
յեկեղեցիդ անդրակաց, 'ի հրեշ-
տակաց դասակցութիւնն, յարդա-
րոցն խորանակցութիւնս, 'ի մար-
դարէիցն ժողովս, յառաքելոցն յա-
թոռակցութիւնս, 'ի հայրապե-
տացն գումարութիւնս, 'ի մարտի-

ռոսացն Ջոկս, 'ի Ճգնաւորացն Ե-
րամն, 'ի կուսանացն խումբս. զորս
զամենեսեան համագումար ընդ-
քեզ առցես, մաղթելով առ Հայրն
երկնաւոր և Բան նորին և Հոգի,
շնորհել աշխարհի զխաղաղութիւն,
եկեղեցւոյ հաստատութիւն, թա-
գաւորաց յաղթութիւն, իշխանաց
քաջութիւն, քահանայապետից
շնորհաբաշխութիւն, քահանայից
մաքրութիւն, ժառանգաւորաց
անբծութիւն, դասաւորաց ուղ-
ղութիւն, ռամկաց բարեգործու-
թիւն, մեղաւորաց դարձ և ապաշ-
խարութիւն, արդարոցն պատուի-
րանապահութիւն. յորոց ամենե-
ցունց համաձայնութեամբ 'ի մի բե-
րան փառաւորի ամենասուրբ Ե-
րրորդութիւնն այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

013

20 6 1.

0015389
0015388
0015387
0015386
0015385